

# ՄԱՆԿԱԲՈՒԺԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ



2

2009



ԱՐԱ  
ArAsPed

World Vision  
Armenia

- ԿՐՈՒՊ • ԹԹՔԱԲՈՐ • ՄԱՆԿԱՆ ՀԱՆԿԱՐԾԱՄԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԱՆԻՇ

## Մանկաբուժական լրատու 2, 2009

### Առաքելությունը.

Ծանոթացնել բուժաշխատողներին առաջատար ամսագրերում հրատարակված, ապացուցողական բժշկությամբ հիմնավորված և գործնական նշանակություն ունեցող մանկաբուժական նյութերին:

Գլխավոր խմբագիր՝  
Կոստանդին Տեր-Ռուկանյան

Խմբագիր՝  
Հրաչուի Ղազարյան

### Խմբագրական խորհուրդ

Անահիտ Ղազարյան  
Հովհաննես Ղազարյան  
Հրաչուի Ղազարյան  
Արմեն Միհրանյան  
Ռուբեն Զանալյան  
Կոստանդին Տեր-Ռուկանյան

Էջաղորդ՝  
Աննա Օհանջանյան

Զեավորող՝  
Հեղնար Պետրոսյան

### Բովանդակությունը

«Կրուպ» 1-11 էջ

«Արտահիվանդանոցային թոքաբորբ երեխաների մոտ» 12-27 էջ

«Մանկան հանկարծամահության համախտանիշ» 28-32 էջ

Պատասխաններ.

1-Ռ, 2-Բ, 3-Բ, 4-Ջ, 5-Ռ, 6-Ջ, 7-Ե, 8-Ջ, 9-Ա, 10-Բ, 11-Ջ, 12-Բ, 13-Ռ, 14-Ե, 15-Ե, 16-Բ, 17-Ռ, 18-Բ, 19-Ե, 20-Ռ, 21-Ջ, 22-Ջ, 23-Բ, 24-Ռ, 25-Ջ, 26-Ջ, 27-Բ, 28-Ջ, 29-Ջ, 30-Ա, 31-Ե, 32-Ջ, 33-Բ, 34-Ա:

Նյութերը պատրաստեցին

Արմեն Միհրանյան

Արմեն Միհրանյան

Հրաչուի Ղազարյան

«Սույն տպագրությունը իրականացվել է Վորլու Վիժն Հայաստան կազմակերպության «Բժշկական օգնության խմբեր» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսվորվում է ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից: Հոդվածներում արտացոլված են հեղինակների տեսակետները, որոնք պարտադիր չեն, որ համընկնեն ԱՄՆ ՄԶԳ տեսակետների հետ»:

# ԿՐՈՒԱ

## Ներածություն

Կրուաը մանկական հաճախ հանդիպող ռեսպիրատոր հիվանդություն է: Կրուա տերմինը ծագում է անգլ-սաքսոնական «kropan» բառից, որը նշանակում է «բարձրածայն լաց լինել»: Հիվանդությունը առավելապես արտահայտվում է ձայնի խռպությամբ, չոր, «հաչոցանման» հազով, ներշնչական ստրիորով և տարբեր աստիճանի շնչառական դիսքուտով, որոնք զարգանում են կարճ ժամանակահատվածում:

## Սահմանումը և տերմինաբանությունը

«Կրուաի համախտանիշ» տերմինը վերաբերում է հիվանդությունների մի խմբի, որոնք տարբերվում են մինյանցից իրենց անատոմիական ընդգրկվածությամբ և էթիոլոգիական գործոնով: Այդ խմբի մեջ ներառվում են սուր լարինգոտրախետիտը, սպաստիկ կրուաը, բակտերիալ տրախետիտը, լարինգոտրախետոբրոնխիտը և լարինգոտրախետօբրոնխոպնևմոնիան: Չնայած «լարինգոտրախետ» և «լարինգոտրախետօբրոնխիտ» տերմինները գրականության մեջ հաճախ օգտագործվում են որպես միմյանց փոխարինողներ, այնուամենայնիվ, դրանք իրենցից ներկայացնում են երկու տարբեր հիվանդագին վիճակներ: Վիրուսային կրուաի համախտանիշի առավել հաճախ և բնորոշ տեսակը սուր լարինգոտրախետն է, որի ժամանակ օբստրուկցիայով ուղեկցվող ախտահարումն ընդգրկում է վերին շնչութիների հատվածը՝ կոկորդի շրջանը, ստորընապանային հյուսվածքը և շնչափողը: Կրուաի ամենահաճախ պատճառը սուր վիրուսային ինֆեկցիան է, սակայն նկարագրված են նաև բակտերիալ և ատիպիկ հարուցիչներ: Ընդունված տեսակետ է, որ սուր լարինգոտրախետը և սպաստիկ կրուաը հարուցվում են միայն վիրուսներով, իսկ լարինգոտրախետօբրոնխիտը և լարինգոտրախետօբրոնխոպնևմոնիան

կարող են լինել ինչպես վիրուսային, այնպես էլ բակտերիալ ծագման: Բակտերիալ տրախիտը, որը հայտնի է նաև մեմբրանով կամ բակտերիալ կրուա անուններով, հարուցվում է այնպիսի բակտերիաներով, ինչպիսիք են *Staphylococcus aureus*-ը, *Haemophilus influenzae*-ն, *Corynebacterium diphtheriae*-ն:

## Տարածվածությունը

Կրուաը (լարինգոտրախետ և սպաստիկ կրուա) 6 տարեկանից փոքր երեխաների հիվանդություն է, առավելապես հանդիպելով 7 ամսականից մինչև 3 տարեկանը, սակայն կարող են հիվանդանալ ինչպես 3 ամսական, այնպես էլ 15 տարեկան երեխաները: Շատ հազվադեպ այն պատահում է նաև մեծահասակների մոտ: Կրուաը կազմում է երեխաների շնչառական ինֆեկցիաների մոտ 15%-ը, և կյանքի երկրորդ տարում երեխաների 1-5%-ը բժշկական քննության կարիք են ունենում կրուաի կապակցությամբ: Տղաները հիվանդանում են ավելի հաճախ, քան աղջիկները (1.5:1.0):

Թեպետ կրուաի դեպքերի մեծ մասը պատահում են ուշ աշնանը և վաղ ձմռանը, այն կարող է հանդիպել ամբողջ տարվա ընթացքում:

Չնայած ինչպես ծնողների, այնպես էլ բուժաշխատողների գլխավոր մտահոգությունը կրուաով հիվանդ երեխաների մոտ դիտվող շնչառական անբավարարության վտանգն է, հիվանդների գերակշռող մասին կարելի է ապահով բուժել տան պայմաններում, և միայն շատ քերի մոտ է արհեստական շնչառության կարիք զգացվում:

## Էթիոլոգիան

Պարագրիափի վիրուսները (1, 2 և 3 տիպեր) կրուաի ամենահաճախ հարուցիչներն

են, կազմելով բոլոր դեպքերի ավելի քան 65%-ը, ընդ որում դեպքերի գերակշռող մասը հարուցում են վիրուսի 1-ին և 2-րդ տիպերը:

Սուր լարինգոտրախեիտ կարող են առաջացնել նաև ադենովիրուսը, ռեսպիրատոր սինցիտիալ վիրուսը, ռինովիրուսը, էնտրովիրուսը, կարմրուկի վիրուսը և գրիպի A և B տեսակները:

Նկատվել է, որ գրիպի A տեսակի վիրուսը հաճախ կարող է լինել շատ ծանր ընթացքով սուր լարինգոտրախեիտի պատճառ։ Յազվադեպ, կրուպով հիվանդներից անջատվում է *Mycoplasma pneumoniae*, որին բնորոշ է առավելապես թերթ ընթացքը։

Նկարագրվել են կրուպի նաև բակտերիալ հարուցիչներ, մասնավորապես՝ լարինգոտրախետրոնիտի և լարինգոտրախետրոնիտներունիայի ժամանակ, սակայն վիրուսային ինֆեկցիայի բարդացումը երկրորդային բակտերիալ սուպերինֆեկցիայով շատ հազվադեպ է։ Այս դեպքերում հայտնաբերվում են *Streptococcus pyogenes*, *S. pneumoniae*, *Staphylococcus aureus*, *Haemophilus influenzae*, և *Moraxella catarrhalis* բակտերիալ հարուցիչները։

Օտար մարմնի ասպիրացիան, տրավման և ալերգիկ ռեակցիաները (սուր անգիներութիկ այտուցը) վերին շնչուղիների օբստրուկցիայի ոչ ինֆեկցիոն պատճառներից են, որոնք պետք է նկատի ունենալ ստրիդորով հիվանդի տարբերակիչ ախտորոշման ժամանակ։

## Պաթոգենեզը և պաթոֆիզիոլոգիան

Ինչպես շնչառական ինֆեկցիաների մեջ մասի ժամանակ, այնպես էլ սուր լարինգոտրախեիտի, լարինգոտրախետրոնիտի, լարինգոտրախետրոնիտներունիայի դեպքերում վիրուսային ինֆեկցիան սկիզբ է առնում քիթընպանից և շնչառական էպիթելիով տարածվում է դեպի կոկորդ և շնչափող՝ կանգ առնելով այնտեղ կամ տարածվելով ավելի ներքև՝ դեպի ստորին շնչուղի-

ները։ Շնչափողի պատերում զարգանում է տարածուն բորբոքում, էրիթեմա և այտուց։ Զայնալարերի շարժունակությունը խանգարվում է։ Կոկորդից ներքև գտնվող շրջանը (սուբգլուտիկ տրախեա) երեխաների վերին շնչուղիների ամենանեղ հատվածն է։ Այս գոտին շրջապատված է պինդ աճառով, և չնչին այտուցը արգելափակում է շնչառական ուղին և զգալիորեն դժվարացնում օդի հոսքը։ Շնչառական ուղու նեղացումը հանգեցնում է լսելի ներշնչական ստրիդորի, իսկ ձայնալարերի այտուցը՝ ձայնի խռապոտության։

Հյուսվածքաբանորեն այս ախտահարված շրջանը այտուցված է, հյուսվածքների տարբեր շերտերում կան բջջային ինֆիլտրատներ, որոնք պարունակում են հիստիցիտներ, լիմֆոցիտներ, պլազմատիկ բջիջներ և նեյտրոֆիլներ։ Բակտերիալ կրուպի դեպքում շնչափողի պատը ի հավելումն բջջային ինֆիլտրատների խոցուված է, շնչափողի լուսանցքում և ստորին շնչուղիներում առկա են պսևդոմենքրաններ և միկրոբացեսներ, թրախի հաստ շերտ։

Վերին շնչուղիների նեղացումը երեխաները փոխհատուցում են ավելի արագ և խորը շնչելով։ Եթե նեղացումը խորանում է, երեխայի ուժեղացված շնչառական ջանքերը դառնում են անարդյունավետ, օդի հոսքը վերին շնչուղիներում դառնում է տուրբուլենտ (մրրկային), առաջ է գալիս ստրիդոր, կրծքավանդակի առաձգական պատերը սկսում են ներքաշվել ներշնչման ժամանակ՝ առաջացնելով կրծքավադակի և որովայնի պատերի ասինխրոն ու անարդյունավետ շարժումներ։ Այդ ժամանակ երեխան ուժասպառ է լինում և դառնում է հիպօքսիկ ու հիպերկապնիկ, ի վերջո՝ արագ զարգանում է շնչառական անբավարություն և շնչառության կանգ։

Սպաստիկ կրուպի ժամանակ սուբգլուտիկ հյուսվածքներում նկատվում է ոչ բորբոքային տիպի այտուց, ընդ որում, ենթադրվում է, որ վիրուսը ուղղակիորեն չի ներթափացնում շնչափողի էպիթել, և օբստրուկցիայի պատճառը ենթալորձային շերտի հանկարծակի առաջացած ոչ բորբոքային այտուցն

Է: Այս այտուցի պատճառը անհայտ է, չնայած կապ է հայտնաբերվել հենց նույն վիրուսների հետ, որոնք առաջացնում են սուր լարինգոտրախնեիտ: Ենթադրվում է, որ սպաստիկ կրուպի առաջացնան գործում առավելապես պատասխանատու է վիրուսային անտիգենի նկատմամբ ալերգիկ ռեակցիան, քան ուղղակի ինֆեկցիան: Ընդհանրապես, կրուպի պաթոգենեզում կարևոր տեղ է տրվում օրգանիզմի գործոններին, քանի որ պարագրիպի վիրուսով վարակվածությունը (հատկապես 3-րդ տիպով) հաճախ է հանդիպում երեխաների շրջանում, սակայն կրուպ զարգանում է միայն նրանց փոքր տոկոսի մոտ: Մի շարք հետազոտություններ մատնաշում են ալերգիկ գործոնի դերը կրկնվող կրուպի պաթոգենեզում: Դնարավոր է, որ պարագրիպի 3 տիպի վիրուսով պայմանավորված առաջնային վարակը (որը կարող է աննկատ անցնել) հանգեցնում է սենսիբիլիզացիայի պարագրիպի ամբողջ խմբի վիրուսների նկատմամբ՝ ստեղծելով սպաստիկ կրուպի զարգացման նախապայման նաև պարագրիպի 1 և 2 տիպերից:

## ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սուր լարինգոտրախնեիտը տիպիկ դեպքերում սկսվում է ոինորեայով, ֆարինգիտով և ջերմության թերևն բարձրացումով: Դաշտային լինում է թերևն հազ: Սակայն, կարծ ժամանակ անց, սովորաբար 12-ից 48 ժամ հետո նկատվում են վերին շնչուղիների օրսուրուկցիայի ախտանիշներ: Երեխայի մոտ ի հայտ են գալիս բնորոշ «հաչոցանման» հազ, ձայնի խռպոտություն և ներշնչական ստրիդոր՝ ջերմության բարձրացումով կամ առանց տենոիդի:

Դատկանշական «հաչոցանման» հազը, ստրիդորը և շնչառական դիսքրեսը մեծ մասամբ զարգանում են հանկարծակի, երեկոյան կամ գիշերը, սակայն հազվադեպ՝ կարող են զարգանալ նաև աստիճանաբար, ցերեկվա ընթացքում: Տիպիկ դեպքում ստրիդորը տեղի է ունենում միայն ներշնչան ժամանակ, բայց ավելի ծանր

դիսքրեսի դեպքում կարող է լինել երկփուլ՝ հանդես գալով նաև արտաշնչման ընթացքում: Սովորաբար, ախտանիշները զգալիորեն վատանում են գիշերը և մեղմանում՝ ցերեկը: Չնայած ռեսպիրատոր դիսքրեսի երևույթները հաճախ սկսվում են հանկարծակի, սակայն լուրջ դիսքրեսի զարգացումը արագ՝ րոպեների ընթացքում, բնորոշ չէ: Սովորաբար շնչառական անբավարարությունը վրա է հասնում մի քանի ժամեր անց: Շնչառական անբավարարության և սպառնացող շնչառության կանգի նշաններն են երեխայի կողմից գործադրվող շնչառական ջանքերի թուլացումը, լեթարգիան, գունատությունը և մթագնած տեսքը: Կրուպով երեխաների մեծ մասի մոտ օրսուրուկցիայի սիմպտոմները վերանում են 48 ժամվա ընթացքում, այնուամենայնիվ, երեխաների մի փոքր տոկոսի մոտ կարող են պահպանվել մինչև 5-6 օր: Կրուպի նշանների անցնելուց հետո երեխաները սովորաբար ունենում են վերին շնչուղիների վարակին բնորոշ ախտանիշներ և հազվադեպ՝ երկրորդային բակտերիալ ինֆեկցիայով պայմանավորված միջին օտիս:

Բժիշկները միշտ պետք է նտահոգվեն «կրուպանման» ախտանիշների այլ հնարավոր պատճառներով, և հետևաբար, ուշադիր անամնեզ հավաքելը և ֆիզիկական քննությունը շատ կարևոր են: Ուշադրության արժանի են հետևյալ կլինիկական արտահայտությունները.

- «հաչոցանման» հազ
- ձայնը հաճախ խռպոտ է
- առկա է տարբեր աստիճանի ստրիդոր՝ գերազանցապես ներշնչական
- կրծքավանդակի պատի տարբեր աստիճանի ներքաշումներ
- երեխան հաճախ անհանգիստ է
- թքահոսությունը բացակայում է
- երեխան տոքսիկ տեսք չունի

Ֆիզիկական քննության ժամանակ կարող են հայտնաբերվել նաև այլ նշաններ, որոնցից են.

- ջերմության բարձրացումը (մինչև  $40^{\circ}\text{C}$ )
- տախիկարդիան (ծանր օբստրուկտիվ ախտանիշների հետ)
- չափավոր տախիանոէն (սովորաբար՝ 50 շնչ/րոպ-ից պակաս)
- գննելիս ընպանի նորմալ տեսքը

Ծնչառական անբավարարության նշաններն են.

- գիտակցության փոփոխությունը՝ երեխայի ուժասպառությամբ և ապարիայով
- գունատությունը
- մթագնած տեսքը
- ներքաշումների նվազումը
- շնչառական աղմուկի թուլացումը (ստրիդորի նվազումը)

Լարինգոտրախետոբրոնխիտը և լարինգոտրախետոպնևմնիան շատ ավելի հազվադեպ են հանդիպում, քան սուր լարինգոտրախետը և սպաստիկ կրուապը: Այս երկու հիվանդությունները կարելի է համարել որպես սուր լարինգոտրախետի ախտաբանական պրոցեսի տարածում: Յիշվանդության սկզբում՝ առաջին 5-7 օրը, երեխայի մոտ դիտվում են լարինգոտրախետի թերև կամ միջին ծանրության նշաններ, որոնք հանկարծակի խորանում են՝ ծանրացնելով երեխայի վիճակը: Յիշվանդության ծանրությունը պայմանավորված է բակտերիալ սուպերինֆեկցիայով, որը վերստին հանգեցնում է ջերմության նոր՝ էլ ավելի բարձրացնան և դժվարացնության:

Սպաստիկ կրուապը հակում ունի սկսվելու գիշերը: Յիշվանդության սկզբում հաճախ դժվար է տարբերակել լարինգոտրախետի-

տը սպաստիկ կրուապից: Երեխան կարող է ունենալ «մրածության» ախտանիշներ և հիմնականում լավ տեսք ունի: Սովորաբար երեխան արթնանում է գիշերը՝ հանկարծակի հեղող, կրուապի հազոր և ներշնչական ստրիդորով: Ջերմության բարձրացում չի լինում, և հաճախ միայն երեխային հանգստացնելը և սառը օդը թեթևացնում են նրա վիճակը: Սակայն այս ախտանիշները կարող են մի քանի անգամ կրկնվել նույն գիշերվա և հաջորդող 3-4 գիշերների ընթացքում: Սպաստիկ կրուապը կարելի է դիֆերենցել լարինգոտրախետից էնդոսկոպիկ հետազոտությունով: Սպաստիկ կրուապի ժամանակ կոկորդի լորձաթաղաքը ունենում է գունատ և ճահճագույն տեսք, իսկ լարինգոտրախետի դեպքում՝ բորբոքված և էրիթեմատոզ:

## Հետազոտումը

Կրուապ ախտորոշելու համար հարկավոր չէ կատարել լաբորատոր և ռենտգենաբանական հետազոտություններ: Ախտորոշելիս վստահաբար կարելի է հիմնվել հիվանդության կլինիկական արտահայտությունների, ինչպես նաև մանրամասն հավաքված անամնեզի և ֆիզիկական քննության վրա: Այնուամենայնիվ, եթե կարիք կա լաբորատոր տվյալների, ապա դրանց նշանակումը պետք է հիմնավորված լինի և ցանկալի է գգուշավորություն դրսնորել, եթե երեխան շնչառական դիսրեսի վիճակում է: Այն հիվանդները, որոնք ունեն տիպիկ կլինիկական նշաններ և դրական են արձագանքում համապատասխան բուժմանը, կարիք չունեն գործիքային հետազոտությունների, սակայն պարանոցի փափուկ հյուսվածքների կողմնային և առաջաետին ռենտգենաբանական նկարը կարող է օգտակար լինել կրուապանման ախտանիշներ ունեցող երեխաների ախտորոշման ճշգրտման գործում:

Լարինգոտրախետի ունեցող երեխաների դասական ռենտգենաբանական պատկերին բնորոշ է այսպես կոչված «աշտարակի նշանը» կամ շնչառական ուղղու նեղացումը սուբգլոտիկ շրջանում (**տես նկարը**): Էպի-

գլոտիտի ժամանակ համանման նկարներում երևում է «բութ մատի նշանը», որն իրենից ներկայացնում է այտուցված մականուկորդը:

Սակայն պետք է նշել, որ ռենտգենաբանական հետազոտությունը կարող է և չօգնել կրուախի ախտորոշման գործում, քանի որ ընդհամենը 50% դեպքերում է, որ նկարներում երևում է դասական «աշտարակի նշանը»:

Կրուախի դասական «աշտարակի նշանը» (սլաքը) ռենտգենաբանական նկարում:



Քանի որ լարինգոտրախտեիտը վերին շնչուղիների հիվանդություն է, ալվեոլային գազափոխանակությունը սովորաբար նորմալ է, և հիպօքսիա ու թթվածնի սատուրացիայի իջեցում չեն նկատվի, քանի դեռ հիվանդի վիճակը չի ծանրացել: Սուր լարինգոտրախտեիտով կամ սպաստիկ կրուպով երեխաների մեծ մասն ունեն պուլսօքսիմետրիայի նորմալ տվյալներ: Պուլսօքսիմետրիան առավել ինֆորմատիվ կարող է լինել այն հիվանդների համար, որոնք ունեն լարինգոտրախտեոբրոնխիտ կամ լարինգոտրախտեօբրոնխոպնևմիա՝ ստորին շնչուղիների ներգրավումով:

Պուլսօքսիմետրիան ցուցված է միջին ծանրության և ծանր կրուպով երեխաներին:

## Ծանրության աստիճանի գնահատականը

Կրուախի ծանրությունը գնահատելու նպատակով նշակվել են բազմաթիվ բալային (միավորներով) համակարգեր: Առավել հաճախ կիրառվում է Westley-ի համակարգը, որը կրուախի ծանրությունը գնահատում է հինգ գործոններով. գիտակցության մակարդակ, ցիանոզ, ստրիդոր, օդի ներթափանցում և ներքաշումներ: Այս համակարգը շատ արժեքավոր է հետազոտություններ իրականացնելիս, սակայն քիչ կիրառվություն ունի առօրյա կլինիկական պրակտիկայում: Ծանրության աստիճանի դասակարգման կլինիկորեն օգտավետ աղյուսակ է նշակվել Կանադայի Ալբերտայի կլինիկական ուղեցույցների աշխատանքային խմբի կողմից:

Ընդհանուր առմամբ, ըստ ծանրության, կրուախը կարելի է դասակարգել չորս աստիճանների:

**Թերեւ** – կա հատուկենտ «հաչոցանման» հազ, երեխայի հանգիստ վիճակում ստրիդորը լսելի չէ, վերանրակային և/կամ միջկողային ներքաշումները (կրծքավանդակի փափուկ մասերի ռետրակցիան) բացակայում են կամ շատ թերեւ են արտահայտված:

**Միջին ծանրության** – առկա է հաճախակի «հաչոցանման» հազ, երեխայի հանգիստ վիճակում հեշտությամբ լսվող ստրիդոր և կրծքավանդակի պատի ու վերկրծուսկրային շրջանի նկատելի ներքաշումներ, սակայն անհագստություն չկա կամ քիչ է արտահայտված:

**Ծանր** – կա հաճախակի «հաչոցանման» հազ, առավելապես ներշնչական և հազվադեպ նաև արտաշնչական (էքսպիրատոր) ստրիդոր, կրծքավանդակի պատի նշանակալից ներքաշումներ, և զգալի անհանգիստ վիճակ կամ դիսրես:

**Սպառնացող շնչառական անբավարարություն** – «հաչոցանման» հազ (հաճախ՝ ոչ առաջին պլանում), հանգիստ վիճակում

լսելի ստրիդոր (հազվադեպ՝ դժվար լսելի), կրծքավանդակի պատի ներքաշումներ (կարող են չնկատվել), լեթարգիա կամ գիտակցության մթագնում, և հաճախ երեխայի ցիանոտիկ տեսք՝ առանց թթվածնի մատակարարման:

## Տարբերակիչ ախտորոշումը

Վերին շնչուղիների սուր օբստրուկցիա ունեցող երեխաների գերակշռող մասը, որոնք ունեն ստրիդոր և կրծքավանդակի ներքաշումներ, իրոք հիվանդ են կրուապով: Ընդհանրապես, կրուապի ախտորոշումը բավական ակնհայտ է, սակայն պետք է նկատի ունենալ և ժխտել նաև ստրիդորի հազվադեպ պատճառները: Ամենահաճախ հանդիպող այլընտրանքային ախտորոշումներից են սուր էափալոտիտը և բակտերիալ տրախտիտը:

Ամենահավանական այլընտրանքային ախտորոշումը **սուր էափալոտիտն է:** Այս հիվանդության առաջնային հարուցիչը *Haemophilus influenzae*-ն է: Սուր էափալոտիտի կարևոր տարբերակիչ նշաններն են «հաչոցանման» հազի բացակայությունը, ջերմության հանկարծակի բարձրացումը, թքահոսությունը, դիսֆագիան, տոքսիկ տեսքը, խորացող անհանգստությունը և տագնապը, նստած դիրքում կզակը առաջ մեկնելը և պառկելուց հրաժարվելը: Հակառակ դրան, սուր լարինգոտրախտիտով երեխան ունենում է «հաչոցանման» հազ, պառկելիս հանգիստ է և պակաս գրգռված: Ունտգենաբանական հետազոտությամբ փորձ է արվել հաստատել կասկածելի էափալոտիտի ախտորոշումը, սակայն այն խորհուրդ չի տրվում, որովհետև նման հիվանդի վիճակը շատ անկայուն է ու խոցելի: Էափալոտիտ կասկածելիս կլինիցիստը պետք է խուսափի հիվանդին գրգռելուց, քանի որ դա կարող է կտրուկ ծանրացնել հիվանդի շնչառական անբավարարությունը, և պատրաստ լինի կատարելու ինտուրացիա:

**Բակտերիալ տրախտիտը** նույնպես դժվար է տարբերակվում կրուապից: Ըստ էւրեյան, կարող են, որ բակտերիալ տրա-

խտիտը դա կրուապի սուպերինֆեկցիա է, և կրուապից առավելապես տարբերվում է բարձր ջերմության առկայությամբ, երեխայի տոքսիկ տեսքով և ադրենալինի նկատմամբ վատ պատասխան ռեակցիայով: Բակտերիալ տրախտիտի բուժումը իր մեջ ներառում է ներերակային անտիբիոտիկներ, և այս հիվանդները հաճախ ինտուրացիայի և արիեստական շնչառության կարիք են ունենում:

## Պրոգնոզը

Կրուապը սովորաբար ինքնուրույն ապաքինվող և գերազանց ելքով հիվանդություն է: Կրուապով հիվանդ երեխաներից քչերն են ունենում հիվանդանոցային բուժման անհրաժեշտություն: Դոսպիտալացված երեխաների մինչև 5%-ը հնարավոր է, որ ինտուրացիայի կարիք ունենան:

## Բուժումը

### Գոլորշիով բուժումը

Կրուապով երեխաներին փորձել են բուժել խոնավեցրած օդով արդեն ավելի քան հարյուր տարի, երբ նախորդ դարում սկսեցին օգտագործել այսպես կոչված «կրուապի վրանները»: Չնայած այս բուժման երկարատև պատմությանը, քիչ փորձնական հետազոտությունների տվյալներ են հրապարակվել: Մեկ լավ մշակված միջին չափի հետազոտությունում և երկու շատ փոքր հետազոտություններում չի հաջողվել ցույց տալ սառը գոլորշիով բուժման որևէ օգուտ: Դիմնվելով բուժման այս եղանակի արդյունավետության փաստերի բացակայության վրա, խորհուրդ չի տրվում կիրառել սառը գոլորշին, անկողնումոտ դրվողխոնավեցուցիչները և ոչ էլ գոլորշիով վրանները: Հատկապես, խորհուրդ չի տրվում օգտագործել սառը գոլորշիով վրանները, քանի որ այն առաջացնում է երեխայի անհանգստություն՝ կապված բուժման ժամանակ վրանի խոնավեցման, սառեցման, և, վերջապես, «վանդակի» միջավայրի տպավորություն թողնելու հետ, որը երեխային մեկուսացնում է ծնողներից: Ավելին, գոլորշիով վրան-

ները հաճախոչ լիարժեք են մաքրվում բազմակի օգտագործման ինտերվալներում, ուստի կարող են վարակի աղբյուր լինել երեխայի համար:

Ըստ որոշ հեղինակների, սառը գոլորշին նույնքան արդյունավետ է համարվում, որպան տաք գոլորշին, ընդ որում, թույլ է տալիս խուսափել այրվածքից: Սառը գոլորշին խոնավեցնում է շնչուղիների սեկրեցիան և փափկեցնում է բորբոքված լորձաթաղանթը: Միաժամանակ, խոնավությունը նվազեցնում է շնչափողի լորձաթաղանթի մածուցիկությունը: Չնայած սառը գոլորշին համարվում է պարզունակ և անվտանգ մեթոդ կրուափի ախտանիշները թերևացնելու համար, այն կարող է ուժեղացնել բրոնխոսպազմը երեխաների մոտ, որոնք ունեն կրուափ սուլող խզզոցով՝ կապված լարինգոտրախեռոբրոնխիտի կամ պնևմոնիայի հետ: Այս երեխաներին սառը գոլորշինը բուժումը պետք է դադարեցնել, եթե սուլող խզզոցները շարունակվում են կամ ուժեղանում են:

Այնուամենայնիվ, վերջին տվյալներով հարցականի տակ է դրվում գոլորշինը բուժման արդյունավետությունը: Վերջերս կատարված մի քանի հետազոտություններով եկել են այն եզրակացության, որ խոնավեցրած օդով ինհալացիան չի ապահովում էական բարելավում թերև և միջին ծանրության կրուափով երեխաների մոտ:

## Թթվածին

Թթվածնի մատակարարումը պետք է նախատեսել իիպօքսիայով երեխաների համար (երբ թթվածնով սատուրացիան սենյակային պայմաններում ցածր է 92%-ից) և արտահայտված շնչառական դիսթրեսի դեպքում: Այն չպետք է ստիպողական լինի, հատկապես եթե դրանից երեխան դառնում է ավելի անհանգիստ:

## Կորտիկոստերոիդներ

Դեռևս 1970-ական թվականներից է քըննարկվում կորտիկոստերոիդների կիրառումը կրուափի բուժման համար: Kairys-ի

1989 թ-ին իրականացրած հետազոտությունը ցույց տվեց այդ բուժման օգտավետությունը հոսպիտալացված երեխաների մոտ:

Ներկայումս կորտիկոստերոիդային բուժումը հանձնարարվում է գրեթե բոլոր փորձագետների կողմից: Մկների վրա կատարած գիտափորձերը ցույց են տալիս, որ ստերոիդները նվազեցնում են բորբոքման աստիճանը և քծիցների վնասումը, և չնայած օրգանիզմի վիրուսային ծանրաբեռնվածությունը մեծանում է, վիրուսների տարածման տևողությունը չի երկարում:

Ստերոիդները կրուափի բուժման հիմնաքարն են: Յիմնվելով ավելի քան քսան ռանդումիզացված կոնտրոլ հետազոտությունների և երկու մետաանալիզի վրա, ցույց է տրվել, որ կորտիկոստերոիդները նվազեցնում են ինտուբացիայի դեպքերի քանակը և տևողությունը, ռեինտուբացիայի կարիքը, հոսպիտալացման տոկոսը և տևողությունը, ինչպես նաև կրուափի ծգձգվող սիմպտոմների հետ կապված բուժիաստատություն վերադառնալու հաճախականությունը: Վերջերս ավարտված կանադական հսկա բազմակենտրոն հետազոտությունը, որում ներառված էին թերև կրուափով 720 երեխաներ, ցույց տվեց, որ դեքսամետազոնով բուժված երեխաները, համեմատած պլացեբոյի հետ, կիսով չափ պակաս են վերադարձել բուժիաստատություն (7% ընդեմ 15%-ի), ունեցել են կրուափի գգալիրեն պակաս ծանրության ախտանիշներ և կորցրել են քնի ավելի քիչ ժամեր բուժումից 48 ժամ հետո: Ավելին, բուժումից 24 ժամ անց այդ երեխաների ծնողները ավելի քիչ սրբես են ապրել, և ինչպես ընտանիքը, այնպես էլ բուժիաստատությունը ավելի քիչ ծախսեր են ունեցել: Արդյունքը առավել մեծ է եղել հատկապես շատ մեղմ սիմպտոմներով հիվանդների (միայն «հաչոցանման» հազ) և այն երեխաների մոտ, որոնք գնահատման պահին ունեցել են կրուափի մի քանի օրվա ախտանիշներ: Յիվանդների մոտ չի գրանցվել որևէ կողմնակի երևույթներ: Այսպիսով, կրուափ ախտորոշումով բոլոր երեխաները պետք է բուժվեն

կորտիկոստերոիդներով, բացառությամբ այն հազվագյուտ դեպքերի, երբ երեխան ունի հայտնի իմունադեֆիցիտային վիճակ կամ վերջերս շփվել է ջրծաղիկով հիվանդի հետ: Կրուափի բուժման նպատակով դեքսամետազոնի տրադիցիոն դոզան 0.6 մգ/կգ է, թեև կան տվյալներ, որ ավելի ցածր դոզաները (0.15 մգ/կգ) հավասար արդյունավետ են: Մյուս կողմից, կոնտրոլ հետազոտությունների մետաանալիզը ցույց է տալիս, որ կորտիկոստերոիդների ավելի բարձր դոզաները կլինիկական կարևոր արդյունավետություն են ապահովում հիվանդների ավելի մեծ մասի մոտ: Բարելավումը սկսվում է միանվագ դոզայի ներմուծումից 2-ից 3 ժամ անց, և տևում է 24-ից 48 ժամ:

Դամարժեք արդյունավետ են համարվում դեքսամետազոնի ինչպես օրալ, այնպես էլ պարէնտերալ եղանակներով ներմուծումները: Այնուամենայնիվ, գերադասելի է օրալ ներմուծումը, քանի որ այն հիմնականում ավելի քիչ տրավմատիկ է: Դեքսամետազոնը կարելի է նշանակել օրալ ճանապարհով՝ բոլոր, այդ թվում և շատ ծանր կրուպով երեխաներին: Օրալ դեքսամետազոնը (կարելի է օգտագործել ներարկման դեղաձև՝ խառնած անուշահամ օշարակի հետ) արագ ներծծվում է, ըստ որում, 5%-ից պակաս դեպքերում են երեխաները փսխում դեղը: Չկան հրապարակված հետազոտությունների տվյալներ, որոնք լուսաբանեին, թե արդյոք կորտիկոստերոիդների բազմակի դոզաները ավելի արդյունավետ են, քան միանվագ դոզան: Դաշվի առնելով հիվանդների մեծ մասի մոտ կրուափի սիմպտոնների կարծ տևողությունը՝ կորտիկոստերոիդի միանվագ դոզան բավարար է հիվանդների մեծ մասի համար:

Պետք է նշել, որ մտահոգություններ կան կորտիկոստերոիդների կողմնակի՝ իմունոսուլպրեսիվ ազդեցությունների հետ կապված, որը կարող է հիվանդի մոտ ինֆեկցիոն բարդությունների պատճառ դառնալ: Դեռևս փորձեր չեն իրականացվել գնահատելու այս ռիսկը, սակայն պետք է ակնկալել, որ նման բարդությունները հազվադեպ

պետք է լինեն ստանդարտ՝ միանվագ դոզայով բուժման դեպքում:

Որոշակի ջանքեր են անհրաժեշտ կրուափի՝ ստերոիդային բուժման նոտեցումները բարելավելու նպատակով: Բժշկական պրակտիկայում շատ երեխաներ շարունակում են ստանալ կորտիկոստերոիդների տևական կուրսեր՝ միանվագ դոզայով բուժման փոխարեն: Շատ հեղինակներ դիտարկել են ստերոիդներով բուժման հետ կապված վիրուսային, բակտերիալ և սնկային բարդությունները. բոլոր այս դեպքերում հիվանդները ստացել են բազմակի դոզաներ: Խորհուրդ չի տրվում ստերոիդների հավելյալ դոզաներ ներարկել կրուպով այն երեխաներին, որոնց վիճակը դրական չի պատասխանել միանվագ դոզային, քանի որ անբավարար են տվյալները, որոնք ցույց տային կրկնակի դոզաների առավելությունը, անհրաժեշտ է հաշվի առնել նաև տևական բուժման հնարավոր ռիսկը:

### Աղրենալին (Էպինեֆրին)

Պարզվել է, որ աղրենալինի ինհալացիան ծանր կրուպով հիվանդների մոտ զգալիորեն նվազեցնում է արհեստական շնչառության անհրաժեշտության դեպքերը: Ինչպես ցույց է տրվել, աղրենալինը 10 րոպեի ընթացքում զգալիորեն պակասեցնում է ռեսպիրատոր դիսթրեսը, և ազդեցությունը տևում է ավելի քան 1 ժամ: Սակայն, աղրենալինի բոլոր էֆեկտները մարում են ինհալացիայից երկու ժամ հետո: Աղրենալինով բուժված հիվանդների վիճակը վերադառնում է սկզբնական ծանրությանը և նրանց վիճակը ավելի չի վատանում, քան եղել էր մինչև բուժումը: Մի շարք հետազոտություններով պարզվել է, որ աղրենալինով բուժված երեխաները կարող են ապահով տուն վերադառնալ, եթե բուժումից 2-3 ժամ հետո նրանց ախտանիշները չեն կրկնվում:

Կրուպով երեխաների բուժման նպատակով կիրառվել է աղրենալինի ռացեմիկ ձևը, սակայն 1:1000 դեղաձևով աղրենալինն ունի համարժեք արդյունավետություն և նույնքան ապահով է, որքան նրա ռացեմիկ

ձևը: Անկախ երեխայի քաշից, կիրառվում է միանվագ դոզա (2.25%-ոց ռացեմիկ աղբենալինի դեպքում 0.5 մլ՝ լուծված 2.5-3.0 մլ ֆիզիոլոգիական լուծություն, կամ 5.0 մլ՝ 1:1000 աղբենալինի դեպքում):

Ընչառական անբավարարության սկսվող նշանների դեպքում կարելի է կիրառել աղբենալինի հաջորդական ներմուծումներ: Աղբենալինի նման «շարունակական» ներմուծումները, կիրառվում են որոշ ինտենսիվ բաժանմունքներում, սակայն կա մեկ հրապարկված հաղորդում այն մասին, թե ինչպես ծանր կրուպով երեխային տվել են աղբենալինի երեք ներութիզացիա մեկ ժամվա ընթացքում, որից երեխայի մոտ զարգացել է փորոքային տախիկարդիա և սրտամկանի ինֆարկտ: Յետևաբար, երբեք չպետք է կիրառել աղբենալինի կրկնվող դոզաներ, եթե երեխայի վիճակը չի հասել շնչառական անբավարարության վիճակին, իսկ եթե նման բուժումը կհամարվի անհրաժեշտ, ապա բուժող բժիշկը պետք է հնարավորինս շուտ կոնտակտի մեջ մտնի ռեանիմատուոգի հետ՝ հետագա բուժման և հնարավոր տեղափոխման համար:

### **Ցավազրկողներ/ջերմիջեցնողներ**

Չնայած չկան հսկվող հետազոտություններ, որոնք հասցեագրված լինեն անալգետիկների կամ անտիպիրետիկների կիրառմանը կրուպով երեխաների մոտ, խելամիտ է խրախուսել նրանց կիրառումը, քանի որ վերջիններս նվազեցնելով ցավը և ջերմությունը, օգնում են երեխաներին ավելի լավ և հանգիստ զգալ իրենց:

### **Խորխաբերներ և դեկոնգեստանտներ**

Չկան հրապարակված փորձնական տվյալներ, որոնք վերաբերում են կրուպով երեխաների մոտ խորխաբերների կամ դեկոնգեստանտների օգտակարությանը: Յետևաբար, որևէ հիմք չկա դրանք կիրառել կրուպով հիվանդ երեխաների բուժման համար:

### **Անտիբիոտիկներ**

Չկան հրապարակված կոնտրոլ հետազոտությունների տվյալներ, որոնք ցույց տա-

յին անտիբիոտիկների օգտավետությունը կրուպով երեխաների մոտ: Քանի որ կրուպը գրեթե միշտ վիրուսային ինֆեկցիայի հետևանք է, ապա էնապիրիկ անտիբիոտիկային թերապիան ռացիոնալ չէ: Ավելին, կրուպով հիվանդների այսպես կոչված «սուպերինֆեկցիան»՝ բակտերիալ տրախետը և պնևմոնիան, այնքան հազվադեպ երևություններ են (1:1000-ից ել պակաս դեպքերում), որ անտիբիոտիկների «կանխարգելիչ» կիրառումը կարել է համարել անհիմն:

### **Գրականություն.**

- **Malhotra A., Krilov R. L. - Viral Croup.**

- Pediatr. Rev. 2001;22:5

- **Knustson D., Aring A. - Viral Croup.**

- Am Fam Physician 2004;69:535-40,541-2

- **James D. Cherry. - Croup.**

- N Engl J Med 2008;358:384-91.

- **Alberta, ON, Canada - Guideline for the diagnosis and management of croup.**

- Alberta Medical Association, 2008.

## Հարցեր ինքնագնահատման համար.

1. Կրուափի էթիոլոգիայի ամենահաճախ հանդիպող վիրուսային հարուցիչն է.

- Ա. գրիպի վիրուսը (Ա և B տիպերը)
- Բ. ռինովիրուսը
- Գ. աղենովիրուսը
- Դ. պարագրիպի վիրուսը (1, 2 և 3 տիպերը)
- Ե. ռեսպիրատոր սինցիտիալ վիրուսը

2. Կրուափը առավել հաճախ հանդիպում է հետևյալ տարիքային խմբում.

- Ա. 0 – 6 ամս
- Բ. 7 ամս – 3 տ
- Գ. 7 – 10 տ
- Դ. 11 – 15 տ
- Ե. 15 տ և բարձր

3. Կրուափը կազմում է երեխաների շնչառական հիվանդությունների մոտավորապես.

- Ա. 10%-ը
- Բ. 15%-ը
- Գ. 20%-ը
- Դ. 25%-ը
- Ե. 30%-ը

4. Կրուափ համախտանիշի մեջ ներառվում են հետևյալ հիվանդությունները, բացի.

- Ա. սուր լարինգոտրախեիտ
- Բ. սպաստիկ կրուափ
- Գ. էպիգլոտիտ
- Դ. սուր լարինգոտրախեոբրոնխիտ
- Ե. բակտերիալ տրախեիտ

5. Կրուափին բնորոշ են բոլոր հետևյալ ախտանիշները, բացի.

- Ա. «հաչոցանման» հազ
- Բ. ներշնչական ստրիտոր
- Գ. ձայնի խռպոտություն
- Դ. թքահոսություն
- Ե. կրծքավանդակի պատի ներքաշումներ

6. Յիվանդանոցի ընդունարան է բերվել նախկինում առողջական խնդիրներ չունեցած 4 տ տղա երեխա, որի մոտ հանկարծակի սկսվել է շնչառական դիսթրես:

**Առաջնային գննումից աչքի է ընկնում երեխայի տոքսիկ տեսքը և խիստ անհանգստությունը:** Նրա մոտ առկա են արտահայտված դժվարաշնչություն, բարձր ջերմություն, դիսֆագիա, թքահոսություն և նստելիս դեպի առաջ թերվելու ծգտում: **Վերոհիշյալ կլինիկական նշաններն առավել բնորոշ են հետևյալ ախտորոշմանը.**

- Ա.** սուր լարինգոտրախետիտ
- Բ.** սպաստիկ կրուա
- Գ.** սուր եպիգլոտիտ
- Դ.** ռետրոֆարինգեալ աբսցես
- Ե.** սուր թոքաբորբ

#### **7. Կրուա ախտորոշելիս բժիշկը հիմնականում հաշվի է առնում.**

- Ա.** լաբորատոր տվյալները
- Բ.** ռենտգենաբանական հետազոտության տվյալները
- Գ.** սոնոգրաֆիկ հետազոտության տվյալները
- Դ.** ընպանից վերցրած քսուքի տվյալները
- Ե.** կլինիկական արտահայտությունները

#### **8. Սուր լարինգոտրախետով երեխաների դասական ռենտգենաբանական պատկերին բնորոշ է.**

- Ա.** ատելեկտազ
- Բ.** ինֆիլտրատիվ ստվեր
- Գ.** «աշտարակի նշան»
- Դ.** «բութ մատի նշան»
- Ե.** թոքային նկարի «ուժեղացում»

#### **9. Կրուաի դեղորայքային բուժման գործում արդյունավետ են համարվում.**

- Ա.** կորտիկոստերոիդները
- Բ.** անտիբիոտիկները
- Գ.** հակահիստամինային պրեպարատները
- Դ.** խորխաբեր դեղամիջոցները
- Ե.** գոլորշիով ինհալացիան

#### **10. Կրուաի բուժման համար դեքսամետազոնը ներկայումս կիրառվում է հիմնականում հետևյալ միանվագ դոզայով.**

- Ա.** 0.05 մգ/կգ
- Բ.** 0.6 մգ/կգ
- Գ.** 1 մգ/կգ
- Դ.** 2 մգ/կգ
- Ե.** 3 մգ/կգ

# ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԹՈՔԱԲՈՐԲՋ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ

## Ներածություն

Արտահիվանդանոցային թոքաբորբջ թոքային հյուսվածքի սուր վարակ է, որը ձեռք է բերվել հիվանդանոցային պայմաններից դուրս:

Այն հաճախ հանդիպում է մինչև 5 տարեկան երեխաների շրջանում: Վիճակագրության համաձայն, Յյուսիսային Ամերիկայում և Եվրոպայում իհնգ տարեկանից փոքր երեխաների թոքաբորբով տարեկան հիվանդացությունը կազմում է 34-40 դեպք՝ 1000 երեխային (տվյալները վերաբերում են արտահիվանդանոցային և հիվանդանոցային թոքաբորբերին՝ միասին վերցրած):

Զարգացող երկրներում իրողություն է թոքաբորբով պայմանավորված ոչ միայն բարձր հիվանդացությունը, այլև՝ մահացությունը: Թոքաբորբից մահանում են ավելի շատ երեխաներ, քան որևէ այլ հիվանդությունից, նույնիսկ ավելի, քան ԶԻԱՌ-ից, մալարիայից և կարմրուկից միասին վերցրած: Ամեն տարի աշխարհում ավելի քան 2 միլիոն երեխա է մահանում թոքաբորբից՝ կազմելով մինչև 5 տարեկան մահվան դեպքերի գրեթե 1-ը՝ 5-ից: Ցավոք, դեռևս անբավարար են այս հիվանդության դեմ ձեռնարկվող քայլերը [WHO, 2006]:

## Եթիոլոգիան

Թոքաբորբի եթիոլոգիան պարզելու համար, ինֆեկցված թոքային հյուսվածքից ուղղակի մանրէաբանական ցանքս ստանալը ինվազիվ տեխնիկա է պահանջում: Այս պատճառով, հրապարակված հետազոտությունները մեծամասամբ հիմնված են այնպիսի լաբորատոր թեստերի վրա, որոնք անուղղակի տվյալներ են տրամադրում թոքաբորբի հարուցիչների վերաբերյալ: Այս անուղղակի մեթոդներից են՝ քիթ-ընպանային ցանքսը, արյան ցանքսը, պոլիմերազա-

յին շղթայական ռեակցիան (PCR), ինչպես նաև սերոլոգիական տվյալները: Սակայն, այս մեթոդները հաճախ ի վիճակի չեն լինում բացահայտելու ինֆեկցիայի հարուցիչին, և ինչ-որ չափով անորոշություն են ստեղծում առանձին միկրոօրգանիզմների իրական տարածվածության մասին:

Չնայած պրակտիկայում թոքաբորբի պատճառը որոշելը հաճախ դժվար է, սակայն իիվանդի տարիքը կարող է օգնել հնարավոր հարուցիչների շրջանակը նեղացնելու գործում: Այսպես, Յ խմբի ստրեպոկոկը և գրամ բացասական աղիքային բակտերիաները նորածինների (0-20 օրական) թոքաբորբի ամենահաճախ հարուցիչներ են, որոնք փոխանցվում են մորից ծննդաբերության ժամանակ՝ ուղղահայաց ճանապարհով: Բացի այդ, խորիոամնիոնիտից կարող են ձեռք բերվել նաև անաէրոբ բակտերիաներ:

Երեք շաբաթականից մինչև 3 ամսական երեխաների շրջանում հարուցիչները առավելապես բակտերիաներ են, որոնցից ամենահաճախ հանդիպում է *Streptococcus pneumoniae*-ն:

Չորս ամսականից բարձր և նախադպրոցական տարիքի երեխաների մոտ թոքաբորբի հիմնական պատճառը վիրուսներն են, որոնցից ռեսպիրատոր սինցիտիվ վիրուսը ամենահաճախ է հանդիպում: Այլ վիրուսային ծագման հարուցիչներից են պարագրիայի վիրուսը, աղենովիրուսը, ոինովիրուսը, ջրծաղիկի վիրուսը, գրիպի վիրուսը, ցիտոմեգալովիրուսը, պարզ հերպեսի վիրուսը, էնտերովիրուսները և վերջերս հայտնաբերված մարդու մետապնևմովիրուսը: Ընդհանուր առմանք, վիրուսները կազմում են մանկական թոքաբորբի պատճառների 14-35%-ը: Վիրուսային թոքաբորբները առավելապես հանդիպում են աշնանը և ձմռանը:

Բակտերիալ հարուցիչները կարող են հանդիպել կլոր տարին, ինչպես նախադպրոցական, դպրոցական, այնպես էլ դեռահասային տարիքներում: *Streptococcus pneumoniae*-ն նորածնային շրջանից հետո ամենահաճախ հանդիպող հարուցիչն է, կազմելով դեպքերի մոտ 13-28%-ը: Ավելի քիչ հանդիպող բակտերիալ հարուցիչներից են *Haemophilus influenzae*-ի B տիպը, *Moraxella catarrhalis*-ը և *Staphylococcus aureus*-ը:

*Mycoplasma pneumoniae* և *Chlamydia (Chlamydophila)* ռունունական պատճենները առավել հաճախ հանդիպում են դպրոցահասակ տարիքի երեխաների և դեռահասների թոքաբորբերի ժամանակ, չնայած վերջերս սկսել են տարածվել նաև նախադպրոցական տարիքում:

Harris-ի և մյուսների տվյալներով, 5-ից բարձր տարիքի երեխաները ավելի մեծ հավանականություն ունեն *Mycoplasma pneumoniae* (42%) և *Chlamydia (Chlamydophila)* ռունունական պատճեններով վարակվելու, քան` 5-ից ցածրերը (համապատասխանաբար՝ 15% և 9%): Սակայն, Block-ը և մյուսները պարզել են, որ *Mycoplasma pneumoniae* և *Chlamydia pneumoniae* հարուցիչների տարածվածությունը 3-12 տ. բոլոր տարիքային խմբերում գրեթե նույնն է, մասնավորապես, ըստ նրանց, 3-4 տ. երեխաների մոտ այդ հարուցիչներից յուրաքանչյուրի տարածվածությունը կազմում է մոտ 23%: Այս տվյալները ավելի մեծ են, քան մնացած հեղինակներին, և բնականաբար, հարցեր են բարձրացնում նշված տարիքային խմբի թոքաբորբերի բուժման մոտեցումներում:

Դայտնի է նաև, որ արտահիվանդանոցային թոքաբորբերի պատճառը հաճախ խառը ինֆեկցիաներն են՝ 8-40%: Երկու և ավելի մանրէային հարուցիչների զուգակցմամբ թոքաբորբերը ավելի հաճախ են հանդիպում, քան նախկինում ենթադրվում էր, կազմելով թոքաբորբով հոսպիտալացվածների մինչև 41%-ը: Ըստ Juven-ի և մյուսների տվյալների, թոքաբորբերի 30% դեպքերում հայտնաբերվում է վիրուս-բակտե-

րիալ ասոցիացիա, 13%-ում՝ երկակի վիրուսային ասոցիացիա և 7% դեպքերում՝ երկու բակտերիաների ասոցիացիա:

## ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեխայի մոտ թոքաբորբի նախին վկայող ծանրակշիռ ախտանիշներից են տենդը, ցիանոզը և շնչառական դիսթրեսի մեկից ավելի հետևյալ նշանները՝ արագացած շնչառությունը (տախիանոտ), հազը, ռնգախաղը, կրծքավանդակի ներքաշումները, կրեափացիոն խզցողները և թուլացած բշտիկային շնչառությունը: Թոքաբորբ պետք է կասկածել, եթե 2 տարեկանից փոքր երեխայի մոտ հայտնաբերվում է արագացած շնչառություն՝  $38^{\circ}\text{C}$ -ից բարձր ջերմությունով: Եթե երեխայի մոտ բացակայում են տենդը կամ դժվարացած շնչառության նշանները, ապա թոքաբորբի առկայությունը քիչ հավանական է:

Տախիանոտն ախտորոշվում է երեխայի շնչառությունը մեկ րոպեի ընթացքում հաշվելով, եթե երեխան հանգիստ է: Առավել տարածված կիրառություն ունի ԱՀԿ-ի կողմից առաջարկված տախիանոտի որոշման չափանիշները: ԱՀԿ-ն հանձնարարում է. «Դուք պետք է հաշվեք երեխայի շնչառությունը մեկ րոպեի ընթացքում՝ որոշելու համար արդյո՞ք երեխան ունի արագացած շնչառություն, թե ոչ: Ընդ որում, երեխան պետք է լինի լուր և հանգիստ, եթե դուք դիտարկում և լսում եք նրա շնչառությունը: Եթե երեխան վախեցած է, լալիս է կամ գրգռված, դուք ի վիճակի չեք լինի ծշգրիտ հաշվել երեխայի շնչառությունը: Ասացեք մորը, որ դուք պատրաստվում եք հաշվել իր երեխայի շնչառությունը: Խննդրեք նրան, որ երեխային հանգստացնի: Եթե երեխան քնած է, մի՛ արթնացրեք նրան: Ուշադրություն դարձրեք երեխայի շնչառական շարժումներին նրա կրծքավանդակի կամ որովայնի որևէ մասում: Եթե դժվարանում եք հետևել այդ շարժումներին, ապա խնդրեք մորը, որ բարձրացնի երեխայի շապիկը: Եթե դուք վստահ չեք, որ ծեր հաշվարկը ծշգրիտ է (որի պատճառը կարող է լինել

օրինակ, Երեխայի ակտիվ շարժումները կամ նրա դժգոհությունը և լացը), ապա կրկնեք հաշվարկը»: (WHO, 2005)

Սովորաբար, առողջ և անհանգիստ Երեխաների շնչառության հաճախականությունը հաշվելը դժվար է, սակայն միջին ծանրության և ծանր թոքաբորբով Երեխաների մոտ հաշվարկը ավելի դյուրին է ստացվում, որովհետև այդ վիճակում նրանք ավելի թույլ են և հանգիստ:

### **ԱՀԿ-ի կողմից տախիանուէի սահմանումը**

<b>Եթե Երեխան</b>	<b>Երեխան ունի արագած շնչառություն, եթե դուք հաշվում եք</b>
1 շաբաթականից մինչև 2 ամսական է	60 կամ ավել շնչառություն մեկ րոպեում
2 ամսականից մինչև 12 ամսական է	50 կամ ավել շնչառություն մեկ րոպեում
12 ամսականից միջև 5 տարեկան է	40 կամ ավել շնչառություն մեկ րոպեում

Integrated Management of Childhood Illness (IMCI) - HANDBOOK, WHO, 2005

**Նշում.** Երեխան, որն ուղիղ 12 ամսական է, ունի արագած շնչառություն, եթե դուք մեկ րոպեում հաշվում եք 40 կամ ավել շնչառություն:

Ըստ Palafox-ի և մյուսների տվյալների, 5-ից փոքր տարիքի թոքաբորբով Երեխաների բոլոր կլինիկական նշաններից, ԱՀԿ-ի սահմանած տախիանուէն ուներ ռենտգենաբանական թոքաբորբի կանխորոշման ամենաբարձր զգայունությունը՝ 74% և սպեցիֆիկությունը՝ 67%, սակայն հիվանդության վաղ շրջանում (3 օրից պակաս տևողությամբ) այն նվազ զգայուն և սպեցիֆիկ էր: Շետազոտության արդյունքներով շնչառության հաճախականությունը օգտակար էր նաև մեկից փոքր տարիքի Երեխաների ծանրության աստիճանը որոշելիս, ըստ որի, 70 շնչ/րոպ-ից բարձր ցուցանիշի դեպքում հիպօքսեմիայի զգայունությունը 63% էր, իսկ սպեցիֆիկությունը՝ 89%: 12-36 ամսական Երեխաների մոտ 40 շնչ/րոպ-ից բարձր շնչառության հաճախականությունը

կապված էր թոքաբորբի հետ, բայց 36 ամսականից մեծ տարիքի Երեխաների մոտ, ըստ այդ հետազոտության, տախիանուէն և կրծքավանդակի ներքաշումները զգայուն նշաններ չեն:

Ըստ Renato T.-ի և մյուսների, տախիանուէն շատ ավելի կարևոր նշան է Երեխաների թոքաբորբի ախտորոշման համար, ավելի զգայուն է, սպեցիֆիկ և վերարտադրելի, քան առևսկուլտացիոն նշանները, մասնավորապես՝ կրեպիտացիոն խզողները: Սովորաբար, արագած շնչառության դրական կանխորոշիչ արժեքը ավելի շատ է զարգացող Երկրներում, որտեղ բակտերիալ թոքաբորբերը ավելի տարածված են: Դակարակ դրան, զարգացած Երկրներում Երեխաների մեծ մասը, որոնք դիմում են հաճախաշնչառության սուր վիճակներով, գերազանցապես ունեն վիրուսային հնֆեկցիայով պայմանավորված բրոնխիոլիտ կամ ասթմա:

Այնուամենայնիվ, կլինիցիստը պետք է տեղյակ լինի, որ տախիանուէի բացակայությունը անպայմանորեն չի բացառում թոքաբորբը: Երեխաները կարող են թոքաբորը ունենալ շնչառության <40շ/րոպ հաճախականությամբ:

Բարձր ջերմությունը ( $>38.5^{\circ}\text{C}$ ) բոլոր տարիքի Երեխաների մոտ համարվում է թոքաբորբի կարևոր ախտանիշներից մեկը, ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած Երկրներում: ԱՀԿ-ի ներկայիս ուղեցույցները չեն ներառում տենդը որպես նշան՝ թոքաբորբի դասակարգման կամ պրոգնոզի գնահատման մեջ: Սակայն Tabish Hazirini և համահեղինակները (2006 թ.) տենդը դիտում են որպես հնֆեկցիայի նախին վկայող կարևոր նշան, որը անտիբակտերիալ բուժման ցուցում է, քանի որ, բարձր ջերմող Երեխաները ավելի հիվանդ տեսք ունեն, նրանց մոտ մեծ է ռենտգենաբանական փոփոխությունների հավանականությունը, ինչպես նաև՝ նրանք ավելի երկար են մնում հիվանդանոցում: Ըստ այս հեղինակների անհրաժեշտ է պարզել, արդյո՞ք բարձր տենդի առկայությունը թույլ է տալիս առանձնացնել այն Երեխաներին,

որոնց համար օգտավետ կլինի անտիբակտերիալ բուժումը:

Եթե բոլոր կլինիկական նշանները (տախիանուն, դժվարաշնչությունը և առևկուլտատիվ տվյալները) բացակայում են, ապա շատ քիչ հավանական է, որ կրծքավանդակի ռենտգենաբանական նկարում թոքաբորբին բնորոշ փոփոխություններ հայտնաբերվեն:

Մեծ տարիքի երեխաների մոտ թոքաբորբի ախտանիշներից կարող են լինել նաև որովայնի ցավը (որը ստոծանիական պլերացից ճառագայթող ցավ է) և կրծքավանդակի ցավը (**Նկար 1**):



**Նկար 1:** Էնֆիեմայի ռենտգենաբանական պատկեր: Հիվանդը 8 տ. տղա է, որը դիմել է որովայնի ուժեղ ցավերով, շերմության բարձրացումով և տախիանուով: Առկա է սկզբունքի պատկեր, որը կապված է պլերացի ցավի պատճառով կրծքավանդակի ստիպուական թերման հետ: Այս դեպքը ցույց է տալիս, որ եթե հիվանդի մոտ առկա են որովայնի ցավեր և տախիանու, կրծքավանդակի ռենտգենոգրաֆիկ հետազոտությունը կարող է օգտավետ լինել:

Կրծքավանդակի ներքաշումը երեխաների թոքաբորբի ծանր ընթացքի կարևորագույն նշաններից է, որը հոսպիտալացման ցուցում է՝ ինտենսիվ բուժում անցկացնելու նպատակով: Ֆիլիպիններում և Սվազիլենդում կատարված հետազոտությունները հնարավորություն տվեցին ավելի ճշգրիտ սահմանելու կրծքավանդակի ներքաշու-

մը, որպես թոքաբորբի ծանրության նշան: Միայն միջկողային կամ վերանրակային ներքաշումները, որոնք հաճախ երեխաների մոտ լինում են նաև այլ վիճակների ժամանակ, ծանր թոքաբորբի նշաններ չեն: Կրծքավանդակի ներքաշումն առկա է համարվում, եթե երեխայի հանգիստ վիճակում նրա կրծքավանդակի պատի ստորին մասը ներշնչելիս ներս է քաշվում (ռետրակցիա): Հետևաբար, ճիշտ տերմին է «կրծքավանդակի ստորին մասի ներքաշումը», իսկ «ենթակողային ներքաշումը» կամ «սուրկոստալ ռետրակցիան» ոչ ճշգրիտ արտահայտություններ են: Այսպիսով, ներքաշումը կողային է: Կրծքավանդակի ներքաշումները առավել ակնհայտ են 2 տարեկանից փոքր երեխաների մոտ, որոնց կրծքավանդակն ունի ավելի բարձր առաձգականություն: Պետք է նշել, որ մեծ տարիքի երեխաների մոտ թոքաբորբը կարող է ընթանալ առանց կրծքավանդակի ներքաշումների՝ կապված կրծքավանդակի նվազ առաձգականության հետ, և սա չի բացառում թոքաբորբը: Shann-ը ցույց է տվել, որ կրծքավանդակի ստորին մասի ներքաշումներով երեխաների մոտ ավելի բարձր է թոքաբորբից մահացության ռիսկը, քան թոքաբորբով այն երեխաներինը, որոնց մոտ այս ախտանիշը բացակայում է:

Կրծքավանդակի ներքաշումը (որը երբեմն միակողմանի է) հաճախ ուղեկցվում է սուլող խզզոցով, սակայն պետք է նշել, որ սուլող խզզոցը չի համարվում առաջնային բակտերիալ թոքաբորբի նշան, քանի որ վերջինս վաղ փուլում առավելապես ալվեոլների ախտաբանական վիճակ է: Առաջնային թոքաբորբի ժամանակ սուլող խզզոց սովորաբար չի լինում:

Սուլող խզզոց լինում է միկոպլազմային թոքաբորբի 30% դեպքերում և ավելի հաճախ՝ ավագ տարիքի երեխաների մոտ: Այս է պատճառը, որ միկոպլազմային թոքաբորբը կլինիկորեն՝ առանց ռենտգենաբանական ախտորոշման, կարելի է շփոթել ասթմայի հետ (**Նկար 2**): Այնուամենայնիվ, եթե առկա է սուլող խզզոց, առաջնային բակտերիալ թոքաբորբի հավանականութ-

յունը շատ քիչ է: Իսկ եթե թոքաբորբ կա, ապա նկատի պետք է ունենալ վիրուսային կամ միկոպլազմային հարուցիչները կամ հիմքում առկա այնպիսի պաթոլոգիա, ինչպիսին է մուկովիսիցիոզը: Միաժամանակ, սուլող խզոցը օգտավետ նշան չի համարվում Երեխայի վիճակի ծանրությունը գնահատելու տեսակետից:



**Նկար 2: Միկոպլազմային թոքաբորբի ռենտգենարանական պատկեր:** Ձերմությունով 6 տ երեխա, որն ունեցել է սուլող խզոցներ: Ռենտգենարանական նկարը ցույց է տալիս ծախս ստորին բլթի թոքաբորբ: Լրացուցիչ հետազոտություններով պարզվել է թոքաբորբի միկոպլազմային էթիոլոգիան: Այս դեպքը բացառություն է այն կանոնից, համաձայն որի թոքաբորբի ժամանակ հազվադեպ են լինում սուլող տիպի խզոցներ:

Տնքոցով շնչառությունը նույնպես համարվում է հիվանդության ծանր ընթացքի և վերահաս շնչառական անբավարարության նշան: Ենթադրվում է, որ տնքոցով շնչառությունը, որպես բնական մեխանիզմ, արտաշնչման ժամանակ մասնակիրեն փակելով ձայնային ճեղքը ավելացնում է արտաշնչման վերջում առաջացող ճնշումը, որպեսզի ալվեոլները հնարավորինս երկար մնան բաց վիճակում, այլապես նրանք կփակվեն կամ կոլապսի կենթարկվեն:

Սովորաբար, առևսկուլտացիան քիչ դեր է խաղում թոքաբորբի ախտորոշման գործում: Ոչ նորմալ առևսկուլտատիվ աղմուկների վերաբերյալ տարբեր հետազոտողների կարծիքները տարանջատվում են: Առավել վստահելի են զննելիս հայտնաբերվող ախտանիշներն ու նշանները: Բակտերիալ թոքաբորբի սկզբնական փուլում ախտա-

բանական առևսկուլտատիվ տվյալներ կարող են չարտահայտվել: Կրեպիտացիան իրենց ներկայացնում է ներշնչման փուլի վերջում լսվող շնչական աղմուկ, որն առաջանում է տերմինալ բրոնխների և ալվեոլների միջև գազային ճնշման հավասարեցման պատճառով: Թոքաբորբի սովորական ընթացքը դեպքում է շնչառության թուլացումը ախտահարված դաշտում, այնուհետև՝ բրոնխային շնչառությունը, որն առաջանում է թոքային հյուսվածքի պնդացման և խոշոր տրամաչափի բրոնխներից շնչական աղմուկի հաղորդակցման հետևանքով: Ընդհանրապես, բրոնխային շնչառությունը բնորոշ է լոբար պնդացմանը, սակայն այն ցածր զգայունություն ունի վաղ մանկական հասակի երեխաների մոտ՝ կապված կրծքավանդակի փոքր չափերի հետ: Շնչական աղմուկների բացակայությունը ենթադրում է ալվեոլ էքսուդատի առկայություն: Առևսկուլտացիայի ժամանակ թուլացած շնչառությունը հաճախ հայտնաբերվող միակ վաղ ախտանիշներից է, սակայն կարող է շփոթություն առաջացնել ախտահարված կողմի որոշման տեսակետից, քանի որ չախտահարված կողմում կարող է լսվել ակնհայտորեն ավելի բարձր և կոչտ շնչական աղմուկ, որը սխալմամբ կարող է ընկալվել որպես բրոնխային շնչառություն: Թոքի պնդացման ախտանիշները հազվադեպ են հանդիպում թոքաբորբով երեխաների սկզբնական զննման ժամանակ: Դեկիդրատացիայով երեխաների մոտ առևսկուլտատիվ տվյալները կարող են բացակայել:

Ըստ Smyth A.-ի և մյուսների հաղորդման, կրեպիտացիան և բրոնխային շնչառությունը թոքաբորբի ախտորոշման տեսակետից ունեն 75% զգայունություն և 57% սպեցիֆիկություն:

Ուշադրության արժանի են նաև այնպիսի ախտանիշները, որոնք չեն առնչվում շնչուղիների հետ, դրանք են՝ լերարգիան, ուտելուց հրաժարվելը, փսխումը, դիարեան, որովայնի ցավը, գրգռվածությունը և դեկիդրատացիայի նշանները:

Պետք է նշել, որ առանձին որևէ կլինիկական տվյալ բավարար չէ որոշելու համար երեխայի մոտ թոքաբորբ կա, թե՝ ոչ: Կլինիկական տվյալների համակցումը առավել ախտորոշիչ նշանակություն ունի:

Հետազոտություններից մեկում ցույց է տրվել, որ ռենտգենաբանորեն հաստատված թոքաբորբով հիվանդները, համեմատած նորմալ ռենտգենաբանական պատկերով հիվանդների, ավելի շատ հավանական է, որ ունենային հետևալ կլինիկական արտահայտությունները՝ բարձր ջերմություն, կրեպիտացիա, թուլացած բշտիկային շնչառություն, տնքոցով շնչառություն, ներքաշումներ՝ տախիանոտի և տախիկարդիայի հետ միասին: Եթե բարձր ջերմությունը գուգակցվում էր հետևյալ երեք ախտանիշներից մեկի՝ տախիանոտի, կրեպիտացիայի կամ թուլացած շնչառության հետ, ապա ռենտգենաբանական թոքաբորբի զգայունությունը տատանվում էր 93.1%-ից մինչև 96.1%: Իսկ եթե առկա էր բարձր ջերմություն՝ գումարած բոլոր երեք ախտանիշները, ապա զգայունությունը հասնում էր 98%-ի: Վերջինիս դեպքում տրամաբանական է ենթադրել, որ ռենտգենաբանական հետազոտության կարիք չկա, քանի որ ահոելի է կատարվելիք նկարում դրական փոփոխությունների հավանականությունը: Սա ավելի շատ վերաբերում է ամբողվատոր օղակին, քանի որ հիվանդանոցային պայմաններում երեխային ռենտգենաբանական հետազոտություն կատարելու ծնողների ակնկալիքները մեծ են:

## Հետազոտությունները

Ռենտգենաբանական հետազոտությունը Հրապարակված հետազոտությունները, որոնք ուսումնասիրել են շնչառական ախտանիշների և կրծքավանդակի ռենտգենոգրաֆիայում հնարավոր թոքաբորբի միջև եղած կապը, տալիս են հակասական տվյալներ: Մի հետազոտության արդյունքում պարզվել է, որ մինչև 5 տ 39°C-ից բարձր ջերմությամբ և 20 000 կամ ավել լեյկոցիտներով, առանց թոքաբորբին բնորոշ կլինիկական նշանների և ինֆեկցիայի

ակնհայտ աղբյուրի հիվանդ երեխաների մոտավորապես 25%-ի մոտ ռենտգենաբանական հետազոտությամբ հայտնաբերվել է թոքաբորբ: Սա խոսում է այն մասին, որ այդ տարիքի անհայտ ծագման բարձր ջերմությունով երեխաներին նպատակահարմար է նշանակել կրծքավանդակի ռենտգենոգրաֆիա: Մեկ ուրիշ հետազոտությունում, Heulitt-ը և մյուսները հաղորդում են, որ մինչև 3 ամսական երեխաների մոտ ջերմության և հաճախաշնչության առկայության դեպքում ռենտգենաբանական թոքաբորբ հայտնաբերելու զգայունությունը և սպեցիֆիկությունը կազմում է համապատասխանաբար 45% և 92%: Ըստ նրանց, ջերմող, սակայն շնչառական ախտանիշներ չունեցող երեխաների միայն 6%-ն ունեին ոչ նորմալ ռենտգենաբանական պատկեր: Հեղինակները խորհուրդ են տալիս կրծքի հասակի ջերմող հիվանդներին ռենտգենաբանական հետազոտություն կատարել, եթե միայն առկա են շնչառական դիսրեսի ախտանիշներ:

Պետք է նշել, որ ռենտգենաբանական նկարներում թոքաբորբի սեզմենտար միաձուլման նշանները միշտ չեն, որ հեշտ է տարբերել սեզմենտար կոլապսի (ատելեկտազի) նշաններից, որոնք հանդիպում են բրոնխիոլիտով հիվանդ երեխաների մոտավորապես 25% - ի մոտ:

Այնուամենայնիվ, թոքաբորբի ախտորոշման տեսակետից, ռենտգենաբանական նկարում հատկանշական կոնսոլիդացիայի (միաձուլման) հայտնաբերումը արժանահավատորեն խոսում է բակտերիալ թոքաբորբի մասին (հետազոտություններից մեկում, ալվեոլար ստվերով 27 հիվանդներից 74%-ն ունեին հաստատված բակտերիալ թոքաբորբ):

Կրծքավանդակի ռենտգենաբանական հետազոտությունը հնարավորություն չի տալիս տարբերակել թոքաբորբի հարուցիչներին, ինչպես որ ենթադրում էին նախկինում: Ընդհանրապես, բլթային կոնսոլիդացիան դասականորեն կապվում էր պնևմոկոկային ինֆեկցիայի, իսկ ինտերստիցիալ ինֆիլտրատները՝ վիրուսային ինֆեկցիայի

հետ: Սակայն, ինչպես բլթային կոնսոլիդացիան, այնպես էլ ինտերստիցիալ ինֆիլտրատները նկարագրված են թոլոր տեսակի հարուցիչների ժամանակ՝ և միայն վիրուսային, և միայն բակտերիալ, և վիրուսաբակտերիալ:

Այսպիսով, ռենտգենաբանական հետազոտությունը շատ քիչ է պիտանի բակտերիալ և ոչ բակտերիալ թոքաբորբերը մինյանցից տարբերելու համար: Միկոպլազմային թոքաբորբին նույնպես հատուկ չէ որևէ պարոգնոմիկ ռենտգենաբանական պատկեր: Նկարագրված են և ինֆիլտրատներ, և բլթային կոնսոլիդացիա, և դրունքային աղենոպաթիա, սակայն պլկրալ էքսուդատը հազվադեպ է հանդիպում:

Ստորին շնչուղիների թեթև, չբարդացած ինֆեկցիաներով երեխաները կրծքավանդակի ռենտգենաբանական հետազոտման կարիք չունեն: Վերջինիս ցուցումներից են կասկածելի կլինիկական տվյալները, ձգձգված թոքաբորբը, անտիբակտերիալ բուժնան անարդյունավետությունը և այնպիսի հնարավոր բարդությունը, ինչպիսին է պլկրալ էքսուդատը:

Թոքաբորբի ռենտգենաբանական քննության վերաբերյալ նի ռանդոմիզացված հսկող հետազոտությունում ընդգրկվել են են 2 ամսականից մինչև 6 տարեկան երեխաներ, որոնց ապաքինման ժամկետը գլխավոր չափանիշ է համարվել, և արդյունքում՝ այդ ժամկետի վրա չեն ազդել կրծքավանդակի ռենտգենաբանական հետազոտման ժամանակ հայտնաբերված տվյալները: Սակայն, անտիբիոտիկներ առավելապես նշանակել են այն հիվանդներին, որոնք ռենտգենաբանորեն հետազոտվել են (համապ. 61% և 53%): Յեղինակները եզրակացրել են, որ ստորին շնչառական ուղիների ինֆեկցիայով 2 ամսականից բարձր երեխաների համար ամբողջատոր պայմաններում կրծքավանդակի ռենտգենաբանական հետազոտումը այնքան էլ օգտավետ և հիմնավորված չէ:

Դարձ է նշել, որ կլինիկական պատկերը և հիվանդության պատմությունը առանձնահատուկ կարևոր են կրծքավանդակի ռենտ-

գենոգրամմայի գնահատման գործում: Այն կարող է նորմալ լինել թոքաբորբի վաղ փուլում կամ անգամ ներկայանալ շեղումներով՝ ջերմության և տախիպնոէի բացակայության դեպքում (**Նկար 3**):



**Նկար 3:** Այս փոքրիկը ներկայացնել է ջերմության, տախիպնոէի և ուտելուց հրաժարման սիմպտոմներով: Առաջին ռենտգեն նկարը (վերևում) գնահատվեց որպես նորմալ: Փոքրիկի վիճակը ավելի վատացավ, սկսեցին լսվել կրեպիտացիոն խզզոցներ կրծքավանդակի ծախ մասում և երկրորդ նկարը (մեջտեղում) ցույց տվեց ծախ վերին բլթի թոքաբորբ: Երեք շաբաթ անց, եթե երեխան լրիվ լավ էր, նկարը (ներքևում) ցույց տվեց ռենտգենաբանական մնացորդային շեղումներ: Այս դեպքը ցույց է տալիս, որ ռենտգենաբանական փոփոխությունները երբեմն կարող են հետ մնալ կլինիկական նշաններից:

Չբարդացած թոքաբորբի ժամանակ կրկնակի ռենտգենաբանական հետազոտությունը արդարացված չէ: Սակայն, այն ցուցված է «գնդաձև» թոքաբորբի, պլիրալ էքսուղատի, պնևմատոցելեի, թոքային արսցեսի, բնածին անոնմալիայի կասկածի կամ թոքի սեկվեստրացիայի դեպքերում, ընդ որում, նման վիճակներում կրկնակի ռենտգենաբանական հետազոտությունը նպատակահարմար է կատարել 14-21 օր հետո՝ համոզվելու համար, որ ախտաբանական պրոցեսը ներծծվել է:

Երիվ բլթային կոլապսի դեպքում միշտ պետք է հսկողական ռենտգենաբանական հետազոտում իրականացնել, քանի որ բրոնխուլտազների առաջացման զգալի վտանգ կա: Առանց կոլապսի կոնսոլիդացիայով 77 երեխաների հսկողական ռենտգենաբանական հետազոտությունները ցույց են տվել, որ եթե երեխան կլինիկորեն լավացել է, ապա 6 շաբաթ անց կատարված ռենտգեն նկարներում չնչին շեղուներ են լինում: Կատարված 59 հսկողական նկարներից 51-ը նորմալ էին, մնացածը՝ կամ «մաքուր» էին կամ ցույց էին տվել նվազագույն փոփոխություններ: Այսպիսով, պլիրալ էքսուղատի կամ լոբար կոլապսի բացակայության դեպքում, թոքաբորբով հիվանդ այն երեխաները, որոնք լավ պատասխան են տալիս անտիբիոտիկների նկատմամբ և դառնում են ասիմպտոմատիկ, հետագա կրկնակի ռենտգենաբանական հետազոտության կարիք չունեն:

Նմանապես, ստացիոնարում էլ կարիք չկա կատարել կրկնակի ռենտգենաբանական հետազոտություն, եթե երեխան կլինիկորեն լավանում է: Բավականաչափ ստուգված է, որ թոքաբորբի ռենտգենաբանական ներծծումը ետ է մնում կլինիկական լավացումից: Այնուամենայնիվ, եթե նկատվում է կլինիկական վատացում (հատկապես, եթե կասկածվում է բարդացած ստաֆիլոկային ինֆեկցիա), ապա սուր վիճակում կրկնակի ռենտգենաբանական հետազոտությունը արդարացված է:

## Ընդհանուր և լաբորատոր հետազոտություններ

### Առաջնային օղակում

Ընդհանուր առմանք, առաջնային օղակում թոքաբորբի կասկածով հիվանդի համար որևէ թեստ ցուցված չէ:

### Պուլսօքսիմետրիա

Զանգիայում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ թոքաբորբից մահացության ռիսկը զգալիորեն բարձրանում է, երբ առկա է հիպօքսիա: Ուստի, պուլսօքսիմետրիան ցուցված է ստացիոնար ընդունված թոքաբորբով յուրաքանչյուր երեխային: Օքսիմետրի կիրառումը շատ դյուրին է և այն չափագրում չի պահանջում:

### Սուր փուլի ռեակտանուներ

Արյան լեյկոցիտների հաշվարկը, նեյտրոֆիլների հաշվարկը, C-ռեակտիվ սախտակուցի (CRP) և էրիթրոցիտների նստեցման արագության (ԷՆԱ) որոշումը սովորաբար նշանակվում է ելենլով այն համոզնությոց, որ այդ տվյալները հնարավորություն կտան տարբերելու բակտերիալ թոքաբորբը վիրուսայինից, ինպես նաև կօգնեն որոշում կայացնելու անտիբակտերիալ բուժման անհրաժեշտության վերաբերյալ:

Վերջերս իրականացված մի հետազոտության նպատակն էր ստուգել, թե արդյո՞ք սուր ռեակտանուների որոշումը հնարավորություն է տալիս տարբերել բակտերիալ թոքաբորբը վիրուսայինից: Nohynek-ը և մյուսները ստուգեցին հիվանդանոց ընդունված ստորին շնչառական ուղիների ինֆեկցիայով 121 երեխաների: Կիրառելով ցանքս կատարելու և սերոլոգիական տեխնիկա, նրանք երեխաներին բաժանեցին 4 խմբի՝ բակտերիալ ինֆեկցիայինով ( $n=30$ ), վիրուսային ինֆեկցիայինով ( $n=30$ ), խառը ինֆեկցիայինով ( $n=24$ ) և անհայտ էթիոլոգիայինով ( $n=37$ ): ԷՆԱ-ի, արյան լրիվ հաշվարկի և CRP-ի ցուցանիշները լայն տատանումներ տվեցին յուրաքանչյուր խմբի հիվանդների մոտ և հնարավոր չեղավ հստակ որոշել այն սահմանագիծը, որով կարելի կլի-

Եթե տարբերել բակտերիալ ինֆեկցիան վիրուսայինից կամ բակտերիալ և խառը ինֆեկցիան վիրուսային ինֆեկցիաներից: Որոշ վիրուսներ, օրինակ ադենովիրուսը կամ գրիպի վիրուսը ընդունակ են հարուցելու բավական ագրեսիվ վարակներ, և այդ դեպքերում օրգանիզմի պատասխան ռեակցիան նման է լինում բակտերիալ ինֆեկցիայի նկատմամբ ցուցաբերած ռեակցիային:

Այսպիսով, սուր ռեակտանտների որոշումը սովորաբար հնարավորություն չի տալիս տարբերելու բակտերիալ թոքաբորբը՝ վիրուսայինից, և դրանք կարելի է որոշել առավելապես բորբոքային ակտիվությանը հետևելու համար, եթե երեխայի վիճակը բուժման ֆոնի վրա չի բարելավվի:

### Սիզանյութ և էլեկտրոլիտներ

Եթե հիվանդը ծանր վիճակում է կամ նրա մոտ առկա են դեհիդրատացիայի նշաններ, ապա նպատակահարմար է որոշել միզանյութը և էլեկտրոլիտները՝ էլեկտրոլիտային շեղումները գնահատելու համար: Անտիդիուրետիկ հորմոնի (ԱԴՀ) անհամապատախան սեկրեցիան հայտնաբերված է ինչպես թոքաբորբով հիվանդ երեխաների, այնպես էլ՝ մեծահասակների մոտ: Մասնավորապես, սուր թոքաբորբով հիվանդ մեծահասակների մոտ ցույց է տրվել, որ երիկամների կողմից ջրի էքսկրեցիան խանգարվում է վազոպրեսինի ազդեցությամբ: Հնդկաստանում կատարված մի հետազոտությունում, հիվանդանոց ընդունման պահին թոքաբորբով 264 երեխաների 27%-ի մոտ հայտնաբերվել էր հիպոնատրիեմիա, և պարզվել էր, որ այս երեխաների 68%-ի մոտ հիպոնատրիեմիան զարգացել էր ԱԴՀ-ի անհամապատասխան սեկրեցիայի հետևանքով: Նման դեպքերում բուժումը իրականացվում է հեղուկի սահմանափակումով:

### Սպեցիֆիկ մանրէաբանական հետազոտություններ

Թոքաբորբի հարուցիչը բացահայտելու համար մանրէաբանական ախտորոշում կատարվում է առավելապես համաձարա-

կաբանական նպատակներով, ընդ որում, զարգացած երկրներում կիրառում են ավելի նվազ ինվազիվ մեթոդներ, քան «ոսկե ստամդարտ» համարվող թոքի ասպիրացիայով նմուշ վերցնելը, որի ժամանակ, օրինակ, աֆրիկացի երեխաների մոտ բակտերիալ աճ է ստացվել մինչև 79% դեպքերում: Հարուցիչի որոշումը երկար ժամանակ է պահանջում, ուստի այն չի կարող թելադրել վաղ բուժման տակտիկան, սակայն միկրոբների կայունության դեպքում այն կարող է հուշել անտիբիոտիկի հետագա ընտրությունը: Պետք է նշել, որ առաջնային օղակում թոքաբորբով երեխայի մանրէաբանական հետազոտման ցուցումներ չկան:

### Արյան ցանքսը

Արևմտյան երկրներում արյան ցանքսը թոքաբորբով երեխաների մոտ դրական է հիվանդների 5-10% դեպքերում, և արյան ցանքսի միակ նպատակը անջատված մանրէների կայուն ծների որոշումը և ուսումնասիրությունն է:

### Զիթ-ըմպանային ցանքս

Զիթ-ըմպանային ասպիրատները հաճախ օգտակար են ռեսպիրատոր վիրուսների իմունոֆլուորեսցենսային մեթոդով արագ որոշելու համար: Դրական ցանքսը, այնուամենայնիվ, կարող է չարտացոլել ստորին շնչուղիների միկրոօրգանիզմները:

### Պլարալ հեղուկ

Կլինկական կամ ռենտգենաբանական հետազոտությամբ հայտնաբերված մեծ քանակությամբ պլարալ հեղուկը ենթակա է ասպիրացիայի՝ միկրոսկոպիկ, ցանքսի և անտիգենային հետազոտությունների համար: Ցանկացած հեղուկ, որը կարող է ոդիտվել կրծքավանդակի առաջահետին ռենտգենաբանական հետազոտման ժամանակ, կրծքավանդակում առնվազն 50 մլ քանակությամբ է, իսկ հեղուկի կորագծի առկայությունը խոսում է կրծքավանդակում մեծ քանակով հեղուկի մասին:

## Արյան սերոլոգիական հետազոտություններ

Ընդհանրապես, անտիգենների, հակամարմինների և իմունային կոմպլեքսների (բացառությամբ միկոպլազմայի) վերաբերյալ թեստերից ոչ մեկը չունի բարձր և բավարար զգայունություն կամ սպեցիֆիկություն: Այս թեստերը հատկապես անարդյունավետ են վաղ մանկական հասակում: Միկոպլազմայի դեպքում, տիտրերի քառակի աճը համարվում է ոսկե ստանդարտ ախտորոշման համար, սակայն հիվանդության երկրորդ շարաթում մեկանգամյա որոշված տիտրը, որը հավասար է կամ գերազանցում է 1:128 նոսրացմանը, խոսում է հնարավոր ինֆեկցիայի մասին: Նկարագրված են խաչաձև ռեակցիաներ լեգիննելային և աղենովիրուսային ինֆեկցիաների միջև:

## Շանրության աստիճանի գնահատականը

Թերև և միջին ժամրության թոքաբորբով երեխաների բուժումը կարելի է ապահով կազմակերպել տանը: Հիվանդության ժամր նշանների դեպքում երեխային պետք է հոսպիտալացնել:

### Հոսպիտալացման ցուցումներն են.

- 4 ամսականից փոքր տարիքը
- սորսիկ տեսքը
- $\text{SaO}_2 <92\%$ , ցիանոզը
- արագացած շնչառությունը, երբ մինչև 1 տ`  $>70$  շնչ./րոպ, մեկից բարձր՝  $>50$  շնչ./րոպ
- դժվարաշնչությունը՝ կրծքավանդակի ներքաշումները
- տնքոցով շնչառությունը
- ապնոէն
- ռնգախաղը
- ջրագրկումը, փսխումը կամ ուտելուց հրաժարվելը
- բերանացի նշանակված անտիբիոտիկով բուժման ձախողումը կամ կիրակական պատկերի վատացումը 48 ժամ հետո
- ընտանիքի կողմից համապատասխան և լիարժեք հսկողության անհնարինությունը
- իմունոդեպրեսիվ վիծակները

Պետք է նշել, որ հոսպիտալացման կարևոր ցուցումներից մեկը դա հիպօքսեմիան է, քանի որ զարգացող երկրներում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ ցածր թթվածնային սատուրացիայով երեխաները մահացության ավելի բարձր ռիսկ ունեն, քան բավարար օքսիգենացված երեխաները: Յիշանդի ծանրությունը գնահատելիս խորհուրդ է տրվում նաև հիմնական նրա ընդհանուր կիրակական նկարագրի և վարքագծի վրա:

## Բարդությունները

Արտահիվանդանոցային թոքաբորբով երեխաների մեծ մասը ապաքինվում են առանց բարդությունների:

Այնուամենայնիվ, բակտերիալ թոքաբորբով հոսպիտալացված հիվանդների մոտավորապես 40%-ի մոտ զարգանում է պա-

### Արտահիվանդանոցային թոքաբորբի բարդությունները

- Բուժման ձախողում՝ կապված անտիբիոտիկային կայունության հետ
- Պլկրալ էքսուլատ և էնպիեմա
- Թոքի արսցեն
- Սեպտիցեմիա
- Ինֆեկցիայի տարածում, օր. օստեոնիտելիտ, սեպտիկ արթրիտ

Acquired Pneumonia in Children: A Clinical Update. Arch Dis Child Educ Pract Ed 2004

րապնևմոնիկ (հարթոքային) էքսուլատ: Բարձր ջերմության պահպանումը, չնայած համապատասխան անտիբակտերիալ բուժմանը, միշտ պետք է կիրակակության մեջ կասկած հարուցի էնպիեմայի զարգացման վերաբերյալ: Պլկրալ հեղուկը կարելի է հայտնաբերել կրծքավանդակի ռենտգենաբանական հետազոտությամբ:

Երեխաների թոքաբորբի հազվադեպ հանդիպող բարդություններից է թոքի արսցենը, որը նույնպես հաճախ հայտնաբերվում է ռենտգենաբանական հետազոտությամբ: Ախտորոշումը կարելի է հաստատել համա-

կարգային տոմոգրաֆիայով: Այս բարդությունից ապաքինված երեխայի մոտ խոռոչները կարող են պահպանվել մի քանի ամիս:

## Բուժումը

### Ընդհանուր միջոցառումներ

Եթե երեխայի բուժումը կազմակերպվում է տանը, ապա երեխայի ծնողները պետք է տեղեկացվեն բարձր ջերմությունը իշեցնելու, ջրազրկումը կանխելու և հիվանդի վիճակի որևէ վատացում ժամանակին նկատելու մասին:

Թոքաբորբով երեխաները սովորաբար ջերմուն են և կարող են ունենալ որոշ ցավեր, ներառյալ՝ գլխացավ, կրծքավանդակի ցավ, արթրալգիա (միկոպլազմային թոքաբորբի ժամանակ), որովայնի ճառագայթող բնույթի ցավ և հնարավոր է նաև միջին օտիտի հետ կապված ականջի ցավ: Պլկրալ ցավը կարող է խոչընդոտել խորը շնչելուն և դժվարացնել հազը: Անտիպիրետիկները և անալգետիկները կարող են կիրառվել օգնելու երեխային լավ գգալ:

Քենիայում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ թոքաբորբով երեխաների մոտ հիպօրսիան ասցացվում է մահացության քառակի ավելացման հետ: Ցածր թթվածնային սատուրացիան ահազանգում է, որ թոքաբորբով երեխան ծայրահեղ ծանր հիվանդ է, և մահվան ռիսկը բարձր է: Trevo Duke-ը և մյուսները հաղորդում են, որ թթվածնաբուժման և նրա մոնիթորինգի համակարգերի ներդրումը զարգացող երկրներում կարող է համարվել իրական, քիչ ծախսատար և առաջնարաց ծրագիր, որով կարել է թոքաբորբով հիվանդ բազմաթիվ երեխաների կյանքեր փրկել: Պետք է նշել, որ հիպօրսիկ երեխաները կարող են և ցիանոտիկ տեսք չունենալ: Խիստ գրգռված վիճակը երբեմն հիպօրսիայի նշան է: Բոլոր այն հիվանդները, որոնց զարկերակային արյան թթվածնային սատուրացիան սենյակային օդի պայմաններում 92% է կամ ցածր, պետք է թթվածնային բուժում ստանան՝ պահպանելու թթվածնային սատուրացիան 92%-ից բարձր մակարդակի վրա:

Եթե երեխայի քթանցքները խցանված են արտադրուկով, ապա զգուշորեն պետք է հեռացնել այն, չնայած, չկան հետազոտություններ քիթընպանային արտածման արդյունավետության վերաբերյալ:

Այս հիվանդները, որոնք փսխում են կամ ծանր վիճակում են, հնարավոր է ներերակային հեղուկների կարիք ունենան: Դրանք պետք է ներարկել հեղուկի հիմնական պահանջի 80%-ի չափով մինչև հիպովոլեմիայի կորեկցիան՝ ծանր հիվանդների մոտ հսկելով շիճուկային էլեկտրոլիտները:

### Անտիբիոտիկային բուժումը

Արտահիվանդանոցային թոքաբորբի բուժման համար անտիբիոտիկի ընտրությունը սովորաբար հիմնվում է հիվանդի տարիքի և հիվանդության ծանրության վրա:

Ամօքսիցիլինը մինչև 5 տարեկան երեխաների բերանացի անտիբակտերիալ բուժման առաջին ընտրությունն է, քանի որ այն էֆեկտիվ է այս տարիքային խնդիր թոքաբորբի հարուցիչների մեջ մասի նկատմամբ, ինչպես նաև լավ տանելի է և էժան:

Եթե ենթադրվում է, որ թոքաբորբը բակտերիալ էքիոլոգիայի է, ապա 2 ամսականից մինչև 5 տարեկան երեխաների համար խորհուրդ է տրվում կիրառել ամօքսիցիլինը՝ 80-90 մգ/կգ/օր դոզայով՝ 7-10 օր տևողությամբ: Այս բուժումը ազդում է S. pneumoniae-ի վրա, որն ամենահաճախ հանդիպող հարուցիչն է վերոհիշյալ տարիքային խնդրում: ԱՄՆ-ում շնչառական ուղիների ինֆեկցիաների ժամանակ բոլոր տարիքային խնդերից անջատված S. pneumoniae-ի 16.7%-ից մինչև 35% շտամները կայուն են պենիցիլինի նկատմամբ: Պենիցիլինի (նաև ամօքսիցիլինի) նկատմամբ կայունությունը պայմանավորված է պենիցիլին կապող սպիտակուցների վնասումով: Ամօքսիցիլինի բարձր դոզաների կիրառումը հագեցնում է այդ պենիցիլին կապող սպիտակուցները՝ արդարացնելով նրա ընտրությունը:

Պենիցիլինի նկատմամբ ալերգիա ունեցող երեխաներին նպատակահարմար է նշանա-

կել մակրոլիդային կամ ցեֆալոսպորինային անտիբիոտիկ: Զանի որ M. pneumoniae-ն թիշ են հանդիպում մինչև 5 տարեկան երեխաների մոտ, մակրոլիդները չեն համարվում բուժման առաջին գործի պրեպարատներ: Սակայն, բուժումից 24-48 ժամ հետո, թեև կասկածվում է M. pneumoniae կամ C. pneumoniae, ապա անօքսիցիլինին կարելի է ավելացնել նաև մակրոլիդ:

Ներկայումս խորհուրդ է տրվում 5 և բարձր տարիքի երեխաների թոքաբորբի բուժման համար կիրառել մակրոլիդ: Այդ դեպքում բուժումը կազդի ոչ միայն M. pneumoniae և C. pneumoniae հարուցիչների վրա, որոնք այս տարիքային խմբի ամենահաճախ հարուցիչներն են, այլև՝ S. pneumoniae-ի վրա, որն ամենահաճախ հանդիպող հարուցիչն է բոլոր տարիքային խմբերում: Բուժման տևողությունը 7-10 օր է, թեև կարելի է կիրառել ազիտրոմիցինը՝ 5 օրյա կուրսով: Հաճախ պենիցիլինի նկատմամբ կայուն միկրոբները կայուն են նաև էրիթրոմիցինի նկատմամբ, իսկ էրիթրոմիցինի նկատմամբ կայունությունը սովորաբար ենթադրում է կայունություն բոլոր մակրոլիդների նկատմամբ: Չկան փաստեր, որ մակրոլիդներից որևէ մեկը ավելի էֆեկտիվ է, քան մյուսները՝ M. pneumoniae կամ C. pneumoniae ինֆեկցիաները բուժելու համար:

Թոքաբորբի ծանր դեպքերում խորհուրդ է տրվում կիրառել մակրոլիդի և β-լակտամային անտիբիոտիկի (օր.՝ բարձր դոզայով անօքսիցիլին կամ ցեֆտրիաքոն) զուգակցում, որը կապահովի ավելի լավ պաշտպանություն կայուն միկրոօրգանիզմներից և խառը ինֆեկցիաներից:

Թոքաբորբերի թերև և միջին ծանրության ձևերի գերակշռող դեպքերում օրալ ծանապարհով ներմուծված անտիբիոտիկը էֆեկտիվ է և ապահով: Ներերակային անտիբակտերիալ բուժումը սովորաբար վերապահվում է այն երեխաների համար, որոնք ունակ չեն ընդունելու օրալ անտիբիոտիկ, օր.՝ փսխման պատճառով ինչպես նաև՝ նորածինների և ծանր թոքաբորբով հիվանդների համար, որոնք հոսպիտալացման

կարիք ունեն: Ներերակային ներմուծման համապատասխան անտիբիոտիկներից են ցեֆոտաքսիմը, ամպիցիլինը, գենտամիցինը, կո-ամօքսիկլավը և ցեֆուլոքսիմը: Ընդ որում, երբ ներերակային անտիբակտերիալ բուժում ստացող երեխայի վիճակը բարելավվում է, ապա կարելի է անցնել անտիբիոտիկի բերանացի ընդունմանը:

Զբարդացած թոքաբորբով հիվանդների անտիբակտերիալ բուժումը պետք է շարունակել 7-10 օր, չնայած դեռևս չկան հսկվող հետազոտության տվյալներ բուժման օպտիմալ տևողության վերաբերյալ:

## Հսկողությունը

Խորհուրդ է տրվում թոքաբորբ ախտորոշումով բոլոր հիվանդներին կրկին քննել 24-48 ժամից ոչ ուշ: Եթե ախտորոշումից 48 ժամ հետո պահպանվում են չլավացած ախտանիշներ կամ տենդ, ապա հիվանդի վիճակը կարիք ունի վերագնահատման: Այս հիվանդների վերաբերյալ բժիշկը պետք է նկատի ունենա:

- անհամապատասխան անտիբակտերիալ բուժում կամ միկրոբային կայունություն
- թոքային բարդություններ, օր.՝ էմպիեմա կամ արսցես
- վիրուսային էթիոլոգիա
- այլ՝ այլընտրանքային ախտորոշումներ:

Բուժման ավարտից հետո ասիմպտոմատիկ հիվանդները, որոնց ֆիզիկական տվյալները նորմալ են, հսկիչ ռենտգենարանական հետազոտության կարիք չունեն:

## Գրականություն.

- **British Thoracic Society Standards of Care Committee. - British Thoracic Society guidelines for the management of community acquired pneumonia in childhood.**

-Thorax 2002;57:1-24

- **Community Acquired Pneumonia in children 60 days through 17 years of age.**
  - Cincinnati Children's Hospital Medical Center – 2005.
- **Guideline for The Diagnosis and Management of Community Acquired Pneumonia.**
  - Administered by the Alberta Medical Association 2002, Reviewed January 2008.
- **Monica Lakhampaul, Maria Atkinson, Terence Stephenson.** - **Community Acquired Pneumonia in Children.**
  - A Clinical Update. Arch Dis Child Educ Pract Ed 2004;89:ep29–ep34.
- **Michael Ostapchuk, Donna M. Roberts, Richard Haddy.** **Community-Acquired Pneumonia in Infants and Children.**
  - Am Fam Physician 2004;70:899-908.
- **Renato T. Stein and Paulo J.C. Marostica.** - **Community-acquired pneumonia.**
  - Paediatric Respiratory Reviews 2006; 7S, S136–S137.
- **Integrated Management of Childhood Illness (IMCI).**
  - HANDBOOK, WHO, 2005.
- **N. Coote and S. McKenzie.** - **Diagnosis and investigation of bacterial pneumonias.**
  - Paediatric Respiratory Reviews (2000) 1, 8-13
- **Lynch T, Platt R, Gouin S, et al.** - **Can we predict which children with clinically suspected pneumonia will have the presence of focal infiltrates on chest radiographs?**
  - Pediatrics 2004;113(3 Pt 1):e186–9.
- **Standard case management of pneumonia in children in developing countries.**
  - Bulletin of the World Health Organization 2003, 81(4)
- **Tabish Hazir, Yasir Bin Nisar, Shamim A Qazi, Shazia F Khan, Mujahid Raza, Shehla Zameer, and Syed Asif Masood.**
  - **Chest radiography in children aged 2–59 months diagnosed with non-severe pneumonia as defined by World Health Organization: descriptive multicentre study in Pakistan.**
    - BMJ 2006; 333: 629.

## Հարցեր ինքնազնահատման համար.

**11. Նորածնային շրջանից հետո երեխաների՝ բակտերիալ թոքաբորբի ամենահաճախ հանդիպող հարուցիչն է.**

- Ա.** Staphylococcus aureus-ը
- Բ.** Mycoplasma pneumoniae-ն
- Գ.** Streptococcus pneumoniae-ն
- Դ.** Moraxella catarrhalis-ը
- Ե.** Haemophilus influenzae-ի B տիպը

**12. Երեխաների վիրուսային թոքաբորբի ամենահաճախ պատճառն է.**

- Ա.** Աղենովիրուսը
- Բ.** Ռեսպիրատոր սինցիտիալ վիրուսը
- Գ.** Ոինովիրուսը
- Դ.** Պարագրիպի վիրուսը
- Ե.** Գրիպի վիրուսը

**13. Mycoplasma pneumoniae և Chlamydia pneumoniae հարուցիչներից թոքաբորբերը առավել հաճախ հանդիպում են հետևյալ տարիքում.**

- Ա.** Նորածնային շրջանում
- Բ.** Կրծքի հասակի տարիքում
- Գ.** Նախադպրոցական տարիքում
- Դ.** Դպրոցական և դեռահասային տարիքներում
- Ե.** Վերոհիշյալ բուլոր տարիքներում

**14. Թոքաբորբի ախտորոշման ամենազգայուն ախտանիշ է համարվում.**

- Ա.** սուրֆեբրիլ ջերմությունը
- Բ.** հազը
- Գ.** ուտելուց հրաժարումը
- Դ.** կրեպիտացիոն խզդոցները
- Ե.** տախիապնոէն

**15. Մարմնի ջերմության ո՞ր ցուցանիշներ են բնորոշ բակտերիալ թոքաբորբին.**

- Ա.** <36.6 °C
- Բ.** 36.6 °C
- Գ.** 36.6 - 37.2 °C
- Դ.** 37.2 - 38.0 °C
- Ե.** >38.5 °C

**16. Ո՞ր ախտանիշը բնորոշ չէ բակտերիալ թոքաբորբի կլինիկական ընթացքին.**

- Ա.** Անքաշումներ
- Բ.** սուլող խզդոցներ

- Գ. ռնգախաղ
- Դ. տնքոցով շնչառություն
- Ե. բարձր ջերմություն

**17. Թոքաբորբի ծանր ընթացքի նշաններից են, բացի.**

- Ա. կրծքավանդակի ներքաշումները
- Բ. տնքոցով շնչառությունը
- Գ. ռնգախաղը
- Դ. բարձր ջերմությունը
- Ե. լեթարգիան

**18. Սուլող խզզոցները բնորոշ են հետևյալ ախտաբանական վիճակներին, բացի.**

- Ա. միկոպլազմային թոքաբորբ
- Բ. բակտերիալ թոքաբորբ
- Գ. վիրուսային թոքաբորբ
- Դ. բրոնխիոլիտ
- Ե. ասթմա

**19. Ո՞ր լաբորատոր ցուցանիշի նորմայից շեղումն ունի կարևոր ախտորոշիչ նշանակություն բակտերիալ թոքաբորբի հաստատման համար.**

- Ա. լեյկոցիտների հաշվարկը
- Բ. ԷՆԱ
- Գ. C-ռեակտիվ սպիտակուցը
- Դ. վերոհիշյալ երեքը միասին
- Ե. վերոհիշյալներից ոչ մեկը

**20. Թոքաբորբի բուժման գործընթացում կրկնակի և հսկիչ ռենտգենաբանական հետազոտություն ցուցված է հետևյալ դեպքերում, բացի.**

- Ա. երբ սկզբնական հետազոտությամբ հայտնաբերվել է լրիվ բլքային կոլապս (ատելեկտազ)
- Բ. երբ սկզբնական ռենտգենաբանական նկարում առկա է եղել պլկրալ էքսուդատ
- Գ. կլինիկական վատացման դեպքում, երբ կասկածվում է բարդացած ստաֆիլոկային ինֆեկցիա
- Դ. կլինիկորեն լավացած և ասիմպտոմատիկ հիվանդների մոտ թոքաբորբի լրիվ ներծծումը հաստատելու համար
- Ե. թոքի արսցեսի դեպքում

**21. Ո՞ր առևկուլտատիվ տվյալը բնորոշ չէ բակտերիալ թոքաբորբի կլինիկային.**

- Ա. կրեպիտացիա
- Բ. շնչառական աղմուկի թուլացում
- Գ. սուլող խզզոց
- Դ. բրոնխիային շնչառություն

**22. Երկու ամսականից մինչև 12 ամսական Երեխաների մոտ, ըստ ԱՀԿ-ի, տախի-պնոէ համարվում է, եթե շնչառության հաճախականությունը.**

- Ա.**  $\geq 30$
- Բ.**  $\geq 40$
- Գ.**  $\geq 50$
- Դ.**  $\geq 60$
- Ե.**  $\geq 70$

**23. Թոքաբորբի ախտորոշման գործում առևկուլտացիայի նշանակության վերաբերյալ ծիշտ են հետևյալ դրույթները, բացի.**

- Ա.** բակտերիալ թոքաբորբի սկզբնական ստադիայում ախտաբանական առևկուլտատիվ տվյալներ կարող են չարտահայտվել
- Բ.** առաջնային օղակում առևկուլտացիան մեծ դեր է խաղում թոքաբորբի ախտորոշման գործում
- Գ.** առավել վստահելի են զննելիս հայտնաբերվող նշանները, քան ոչ նորմալ առևկուլտատիվ տվյալները
- Դ.** թոքաբորբի ժամանակ առևկուլտատիվ աղմուկների վերաբերյալ հետազոտողների կարծիքները չեն համընկնում և նրանց միջև քիչ համաձայնություն կա

**24. Մինչև 5 տարեկան թոքաբորբով հիվանդ Երեխաների բերանացի ընդունման առաջին ընտրության անտիբիոտիկն է.**

- Ա.** ամպիցիլինը
- Բ.** կոտրիմոքսազոլը
- Գ.** էրիթրոմիցինը
- Դ.** ամօքսիցիլինը
- Ե.** ցեֆալեքսինը

**25. Թոքաբորբով հիվանդ 5 և բարձր տարիքի Երեխաների անտիբակտերիալ բուժման համար ներկայումս խորհուրդ է տրվում կիրառել.**

- Ա.** ամինոգլիկոզիդային անտիբիոտիկ
- Բ.** β-լակտամային անտիբիոտիկ
- Գ.** մակրոլիդային անտիբիոտիկ
- Դ.** ցեֆալոսպորինային անտիբիոտիկ
- Ե.** ֆոտորինոլոնային անտիբիոտիկ

**26. Չբարդացած թոքաբորբով հիվանդի անտիբակտերիալ բուժման օպտիմալ տևողությունն է.**

- Ա.** 3 – 5օր
- Բ.** 5 – 7օր
- Գ.** 7 – 10օր
- Դ.** 10 – 14օր
- Ե.** 14 – 21օր

# ՄԱՆԿԱՆ ՀԱՆԿԱՐԾԱՄԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ

## Սահմանում

Մանկան հանկարծամահության համախտանիշը (ՄՀՀ) **մինչև մեկ տարեկան երեխայի հանկարծակի, անբացատրելի մահն է:** ՄՀՀ-ն առաջանում է առողջ երեխայի մոտ, և դեպքի մանրամասն ուսումնասիրությունից հետո, մահվան պատճառը մնում է անհայտ:

Միայն այն դեպքում կարելի է համարել, որ **դեպքի մանրամասն ուսումնասիրություն է կատարված**, եթե առկա են հետազոտման ստորև բերված բոլոր բաղադրիչները.

- լոիվ դիահերձում,
- մահվան վայրի գննություն,
- կլինիկական անամնեզի քննություն:

## Վտանգի գործոնները

ՄՀՀ-ի վտանգի գործոնները որոշվել են համաձարակաբանական հետազոտությունների արդյունքում: Այն ավելի հաճախ հանդիպում է տղաների շրջանում (3:2):

## Վտանգի գործոններ են.

- փորին և կողքին պառկած վիճակում քնելը,
- հղիության ընթացքում մոր ծխելը,
- շրջապատի ծխախոտի ծուխը,
- երեխայի գերտաքացումը (պահելը չափից ավելի տաք պայմաններում),
- փափուկ անկողինը,
- անբավարար պոենատալ խնամքը,
- մոր երիտասարդ տարիքը,
- անհասությունը կամ ծննդյան ցածր քաշը:

Երկար տարիներ համարվում էր, որ ապնուն ՄՀՀ-ի նախորդող գործոն է: Այժմ ապացուցված է, որ ապնուն չի նախորդում ՄՀՀ-ին և չի վկայում վերջինիս առաջացման վտանգի մասին:

ՄՀՀ-ն հազվադեպ է հանդիպում կյանքի առաջին ամսվա ընթացքում, հանդիպման հաճախականությունը հասնում է առավելագույնի երկուսից երեք ամսականում և ապա նվազում է:

## Տարածվածությունը

ԱՄՆ-ում յուրաքանչյուր տարի ՄՀՀ-ից մահանում է շուրջ 2500 երեխա:

## Պարոֆիզիոլոգիան

Դամաձայն վերջին հետազոտությունների, ՄՀՀ-ն բազմագործունային վիճակ է. ՄՀՀ-ի առաջացման մեջ նշանակություն ունեն գենետիկական, արտաքին միջավայրի և վարքագծային/հասարակական, մշակութային գործոնները:

Ըստ կրկնակի ներշնչման տեսության, փորին պառկած վիճակում քնող երեխաների արտաշնչած ածխաթթու գազը կուտակվում է դեմքի շուրջ, և երեխան ներշնչում է այն, հատկապես եթե պառկած է դեմքով դեպի ներքև կամ փափուկ անկողնում: Ածխաթթու գազի կրկնակի ներշնչումը բերում է հիպերկապնիայի, հիպօրսիայի և հաջորդող մահվան, եթե արթնացման մեխանիզմները լիարժեք չեն գործում: ՄՀՀ-ից մահացած երեխաների գլխուղեղի փորոքներում հայտնաբերվել են սերոտոնինային ռեցեպտորների անկանոնություններ: Այս անոնական կարող է պատասխանատու լինել արթնացման և կարդիոռեսպիրատոր մեխանիզմների խափանման համար: Սերոտոնինային ռեցեպտորների անկանոնությունների պատճառով հիպերկապնիայի

կամ հիպօքսիայի էախզողները կարող են չարթնացնել երեխային:

Որոշ հետազոտություններով հայտնաբերել են սերոտոնին փոխադրող սպիտակուցի գենի (5 HTT) պրոմոտեր հատվածի պոլի-նորֆիզմ: ՄՀՀ-ով երեխաների մոտ ավելի հաճախ են հայտնաբերվում պրոմոտեր ազդեցությունը խթանող ալելներ, որոնք բարձրացնում են սերոտոնինի փոխադրիչի ակտիվությունը և, հետևաբար, նյարդային վերջավորություններում նվազեցնում են սերոտոնինի քանակը:

**Պոլիմորֆիզմ հայտնաբերվել է նաև ՄՀՀ-ում դեռ ունեցող այլ գեներում, որոնցից են SCNA5-ը, նատրիումական անցուղու գենը, որի հետ կապ ունի երկարացած QT ինտերվալը և վեգետատիվ նյարդային համակարգի զարգացման վրա ազդող գեները (PHOX2a, RET, ECEL, TLX3, EN1):**

Այսպիսով, երեխաները կարող են ունենալ գենետիկական նախատրամադրվածություն ՄՀՀ-ի հանդեպ, որը դրսևորվում է արտաքին միջավայրի որոշ պայմաններում (փորին պառկած դիրք, ծխախոտի ազդեցություն):

## Տարբերակիչ ախտորոշումը

ՄՀՀ-ն բացառման ախտորոշում է, հետևաբար, այլ վիճակները պետք է ժխտել լրիվ դիահիերձման, մահվան վայրի զննության և անամնեզի քննության միջոցով: ՄՀՀ-ն անհրաժեշտ է տարբերակել հետևյալ վիճակներից: սեպսիս, թոքաբորբ, սրտի բնածին արատ, առիթմիա, երկարացած QT ինտերվալ, միոկարդիտ, կարդիոմիոպաթիա, տրավմա, խեղում, մակերիկամների հիպոալլագիա և նյութափոխանակության ժառանգական խանգարումներ (օր՝ ճարպաթուների օքսիդացման խանգարումներ):

Եթե ընտանիքում ՄՀՀ-ն կրկնվել է, անհրաժեշտ է ժխտել ժառանգական հիվանդությունը: Այն ընտանիքում, որում արդեն տեղի է ունեցել ՄՀՀ-ի դեպք, վերջինիս կրկնության վտանգը կազմում է 2-6 տոկոս: ՄՀՀ-ի կրկնության կամ միայնակ խնամողի դեպ-

քում կարևոր է հաշվի առնել նաև երեխայի սպանության հավանականությունը:

## ՄՀՀ-ի վտանգի նվազեցումը

ՄՀՀ-ի վտանգի նվազեցումը հիմնված է համաձարակաբանական հետազոտություններով հաստատված, ՄՀՀ-ի հետ համակցված վտանգի գործոնների բացառման վրա:

**Երեխային պետք է քննենել միայն մեջքին պառկած դիրքում:** Եվ՝ կողքին, և՝ փորին պառկած դիրքերը ՄՀՀ-ի վտանգի գործոններ են: Կողքին պառկած դիրքը վտանգի գործոն է, քանի որ այն անկայուն դիրք է. երեխան կարող է կողքից շրջվել փորին, որը, մեջքին քննելու համենատ, ՄՀՀ-ի վտանգի խիստ բարձր գործոն է:

Մանկան անհրաժեշտ է մեջքին պառկեցնել նորածնային շրջանի առաջին խկ ժամերից: Վաղաժամ ծնված երեխաների շնչառական շարժումները կարող են բարելավվել փորին պառկած դիրքում, սակայն երեխայի վիճակի կայունացումից անմիջապես հետո, նախքան հիվանդանոցից դուրս գրելը, անհրաժեշտ է երեխային պառկեցնել մեջքին:

Արթուր ժամանակ խորհուրդ է տրվում երեխային պառկեցնել փորին՝ «փորիկի ժամեր», որը նապաստում է փոքրիկի շարժողական զարգացմանը և կանխում է դիրքային պլազմոցեֆալիայի առաջացումը: Դիրքային պլազմոցեֆալիայի կանխման այլ միջոցներից են մեջքին քնած ժամանակ գլխի դիրքի փոփոխությունները, արթուր ժամանակ ուղիղ դիրքում «գրկելու ժամերը»:

**ՄՀՀ-ի հաստատված վտանգի գործոն է պրենատալ և պոստնատալ ծխախոտի ազդեցությունը:** Այն կարող է բերել երեխայի ծննդյան ցածր քաշի, թոքերի ածի և էլաստիկության նվազեցման, վարակների հաճախացման: Պրենատալ շրջանում ծխախոտի ազդեցությունը կարող է բերել արթուր ժամանակ դեֆեկտի առաջացման:

Անհրաժեշտ է խուսափել երեխայի գերտարացումից. սենյակի ջերմաստիճանը

պետք է հարմարավետ լինի թերև հագնդված չափահասի համար, պետք չէ երեխային չափից շատ հազուստ հագնել:

Դետագոտությունները ցույց են տվել, որ ծծակի օգտագործումը զգալի նվազեցնում է ՄՀՀ-ի վտանգը՝ մոտ 90 տոկոսով: Ծծակի դրական ազդեցության մեխանիզմը վերջնականապես պարզաբանված չէ, սակայն ենթադրվում է, որ ծծակի օգտագործումը իջեցնում է քնած երեխայի արթնացման շեմը: Ծծակի կիրառումն ունի թերություններ, որոնք են՝ կծվածքի խանգարում առաջացնելու վտանգը, միջին օտիտի բարձր վտանգը, կրծքով սնուցման տևողության կրծատումը:

Դաշվի առնելով նշված վտանգները, ԱՐԿ-ն իր հանձնարարականներում (կրծքով սնուցման ժրագիր) արգելում է ծծակի օգտագործումը: ԱՄՆ-ի մանկաբուժական ակադեմիան (AAP) այս հարցում ցուցաբերում է տարբերակված մոտեցում, իիմնավորելով այն հետևյալ դրույթներով.

• Կծվածքի խանգարումը սովորաբար հետ է զարգանում՝ ծծակի օգտագործումը դադարեցնելուց հետո:

• Ծծակի օգտագործումը կարող է կրծատել կրծքով սնուցման տևողությունը, եթե այն երեխային տրվում է կյանքի առաջին շաբաթվա ընթացքում: Զկան ապացույցներ, որ ծծակը կարող է ազդել կրծքով սնուցման վրա, եթե վերջինս տրվում է կրծքով սնուցման կայունացումից հետո:

• Ծծակի օգտագործումը 1.2-2 անգամ բարձրացնում է միջին օտիտի վտանգը: Ընդհանրապես միջին օտիտի վտանգը ցածր է մինչև մեկ տարեկան հասակը, հատկապես մինչև վեց ամսականը, երբ ՄՀՀ-ի վտանգն առավելագույնն է: Այնուամենայնիվ, երբ ծծակի օգտագործումը շարունակվում է նաև վեց ամսականից հետո, բարձրանում է միջին օտիտի վտանգը: Ծծակ օգտագործողների մոտ ավելի հաճախ են արձանագրվել ստամոքսաղիքային վարակներ և բերանի գաղութավորում *Candida*-ով:

• Ծծակը խորհուրդ է տրվում օգտագործել երեխայի կյանքի առաջին տարում, քնած ժամերին: Կրծքով սնուցվող երեխային, մինչև մեկ ամսական հասակը, չպետք է ծծակ տալ. անհրաժեշտ է համոզվել, որ կրծքով սնուցումը կայունացել է: Չի կարելի ծծակը մտցնել որևէ քաղցր լուծույթի մեջ: Անհրաժեշտ է հաճախակի լվանալ և պարբերաբար փոխել ծծակը: Եթե երեխան հրաժարվում է ծծակից, ապա պետք չէ ստիպողաբար տալ: Եթե քնելուց հետո երեխան ծծակը դուրս է հանել բերանից, կրկին այն ներմուծելու կարիք չկա:

**Երեխային փափուկ ներքնակով կամ բարձով քնեցնելը** բարձրացնում է ՄՀՀ-ի վտանգը 5 անգամ, իսկ եթե այն զուգորդվում է փորին պառկած քնելու դիրքի հետ, ապա ՄՀՀ-ի հավանականությունը բարձրանում է ավելի քան 20 անգամ: Երեխայի օրորոցում անհրաժեշտ է օգտագործել կոշտ ներքնակ՝ ծածկված մեկ սավանով: Օրորոցում չի կարելի օգտագործել փափուկ ներքնակներ, բարձեր կամ այլ փափուկ առարկաներ: Վտանգավոր է նաև հարվածներից խուսափելու համար օրորոցի ձողերին փափուկ բարձիկներ տեղադրելը: Այս նպատակով կարելի է օգտագործել կոշտ, բարակ, բարձի ձև չունեցող իրեր, որոնք պետք է լավ ամրացնել օրորոցի ձողերին: Թեք վերմակ օգտագործելու դեպքում այն պետք է երեք կողմից դնել ներքնակի տակ, այնպես, որ վերմակը չբարձրանա ու հասնի երեխայի կրծքավանդակին:

Մոր հետ միևնույն անկողնում քնելը բարենպաստ ազդեցություն ունի կրծքով սնուցման և երեխա մայր կապի հաստատման մեջ: Յայտնի է, որ կրծքով սնվող երեխաները հարաբերականորեն հաճախ են մոր հետ միևնույն անկողնում քնում: Սակայն, հետազոտությունները փաստում են, որ երեխայի և ծնողի համատեղ քնելու դեպքում բարձրանում է մանկան հանկարծանահության վտանգը: Վտանգը հատկապես բարձր է, եթե երեխայի ծնողը / ծնողները ծխում են, անկողնում քնում են մեկից ավելի մարդիկ, ծնողը / ծնողները ալկոհոլ կամ արթնացման վրա ազդող դեղորայք են ըն-

դունել, ծնողը / ծնողները գերիզմած են և երեխան 11 շաբաթականից փոքր է:

Վտանգավոր է երեխային քնեցնել թախտին, բազմոցին, բազկաթոռին:

Կրծքի հասակի մանկիկին չի կարելի քնեցնել այլ երեխայի հետ նույն անկողնում:

Վերջերս հետազոտությունները ցույց են տվել, որ ՄՀՀ-ի վտանգը ամենացածրն է, երբ երեխան քնում է ծնողների հետ նույն սենյակում, բայց իր օրորոցում: Յետևաբար, խորհուրդ է տրվում երեխայի հետ քնել նույն սենյակում, սակայն տարբեր անկողիններում: Օրորոցը պետք է տեղադրել ծնողների անկողնու կողքին, որպեսզի հարմար լինի կրծքով սնուցման համար: Կրծքով կերակրման կամ մանկիկին հանգստացնելու համար կարելի է նրան տեղափոխել ծնողների անկողին, սակայն, երբ ծնողները պատրաստվում են քնելու, երեխային պետք է վերադարձնել իր օրորոց:

## Ամփոփում

### ՄՀՀ-ի կանխման համար առաջարկվում է

- Երեխային քնեցնել մեջքին պառկած ռիրքում,
- Երեխային քնեցնել կոշտ ներքնակի վրա,
- ծծակ օգտագործել մեկ ամսականից հետո,
- խուսափել ծխախոտի պրենատալ և պոստնատալ ազդեցությունից,
- խուսափել երեխայի գերտաքացումից,
- Երեխայի հետ քնել նույն սենյակում, սակայն տարբեր անկողիններում:

## Գրականություն.

### • Rachel Y. Moon, Linda Y. Fu -Sudden Infant Death Syndrome.

- PIR. Vol.28 N6 June 2007, pp. 209-214.

### • AAP -The Changing Concept of Sudden Infant Death Syndrome: Diagnostic Coding Shifts, Controversies Regarding the Sleeping Environment, and New Variables to Consider in Reducing Risk.

- Pediatrics. Vol. 116 No. 5 November 2005, pp. 1245-1255.

### • Carl E. Hunt, Fern R. Hauck-Sudden Infant Death Syndrome, Review.

- CMAJ. Vol 174 (13) June 20, 2006, pp. 1861-1869.

## Դարցեր ինքնագնահատ ման համար.

### 27. Նշվածներից որը ՄՀՀ-ի վտանգի գործոն չէ

- Ա. մոր հետ միևնույն անկողնում քնելը
- Բ. նախկինում ապնուի եալզողը
- Գ. արական սեռը
- Դ. փորին պառկած քնելը

### 28. ՄՀՀ-ի մասին նշված հայտարարություններից ո՞րն է ճիշտ

- Ա. բազմաթիվ ծածկոցներով երեխային ծածկելը նվազեցնում է ՄՀՀ-ի վտանգը
- Բ. ծծակի օգտագործումը բարձրացնում է ՄՀՀ-ի վտանգը
- Գ. որոշ երեխաներ կարող են գենետիկական նախատրամադրվածություն ունենալ ՄՀՀ-ի հանդեպ
- Դ. կողքին պառկած դիրքում քնելը փորին պառկած դիրքից անվտանգ է

### 29. Մայրը, ում երկու երեխաները մահացել են ՄՀՀ-ից, իդի է և եկել է նախածննդյան այցի: Այս դեպքում լավագույն գործելակերպն է

- Ա. երեխային ծծակ տալ ծնվելուց անմիջապես հետո
- Բ. երեխային քնեցնել մոր հետ նույն անկողնում
- Գ. հավաքել սոցիալական և գենետիկական գործոնների մանրամասն անամնեց
- Դ. երեխային քնեցնել կողքին պառկած դիրքում, փսխումից խուսափելու համար

### 30. Կրծքի հասակի երեխաների քնելու լավագույն պայմաններն են

- Ա. փորին պառկած դիրք, առանց վերմակի, մեկ բարձ գլխի տակ
- Բ. կողքին պառկած դիրք, մեկ բարակ վերմակով, առանց բարձի
- Գ. մեջքին պառկած դիրք, մեկ բարձ գլխի տակ
- Դ. մեջքին պառկած դիրք, մեկ բարակ վերմակով, առանց բարձի

### 31. Նշված տարբերակներից ո՞րն չի հակասում ՄՀՀ-ի սահմանմանը

- Ա. մինչև մեկ տարեկան առողջ երեխայի հանկարծակի, անբացատրելի մահ
- Բ. մինչև մեկ տարեկան երեխայի հիվանդությամբ բացատրվող մահ
- Գ. մինչև մեկ տարեկան երեխայի հանկարծակի մահ, երբ դիահերձման միջոցով պարզվում է մահվան պատճառը
- Դ. ցանկացած տարիքի առողջ երեխայի հանկարծակի, անբացատրելի մահ

### 32. Նշվածներից ո՞րն է հանդիսանում ՄՀՀ-ի վտանգի գործոն

- Ա. ծննդյան ցածր քաշը
- Բ. փորին և կողքին պառկած վիճակում քնելը
- Գ. երեխայի գերտաքացումը
- Դ. նշվածներից բոլորը

### 33. ՄՀՀ-ի վտանգը նվազեցնելու համար ծծակի օգտագործման մասին ո՞ր խորհուրդն է ընդունելի

- Ա. ծծակ օգտագործել երեխայի և՝ արթուն, և՝ քնած ժամանակ
- Բ. ծծակ օգտագործել երեխայի քնած ժամերին, մեկ ամսականից հետո
- Գ. կրծքով սնուցվող երեխային ծծակ տալ մինչև մեկ ամսական հասակը
- Դ. ծծակ տալուց առաջ այն մտցնել որևէ քաղցր լուծույթի մեջ

### 34. ՄՀՀ-ի կանխման համար անհրաժեշտ է

- Ա. երեխային քնեցնել մեջքին պառկած դիրքում
- Բ. բացառել ծծակի օգտագործումը
- Գ. խուսափել ծխախոտի պոստնատալ, այլ ոչ թե պրենատալ ազդեցությունից
- Դ. երեխայի հետ քնել նույն անկողնում